№ 3 (156) XV ՏԱՐԻ ՄԱՐՏ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԵՐԲ ԱՐԴԵՕՔ ԿԸ ԽՐԱՏԻՆՔ

Գաղանացած խուժանը երեք օր շարունակ կոտորում ու հրդեհում էր հայոց թաղերի մէջ և հայ ազգաբնակութիւնը փախչում էր խելակորոյս, պատսպարուում անկիւնները, գնդակահարուում կամ մորթոտուում.—ահա մերկ, այլանդակ, անպատիւ իրողութիւնը, որ մեր դարևոր նախատինքն է, մեր յաւիտենական պատուհասը..

Ջարդուած, մի՞շտ ջարդուած...

Համերաշխութեան ու բիրոյ աւետարանը քարոզեցինք դարերից ի վեր և անինայ կոտորուեցինք մեզ շրջապատողներից: Քրիստոնեայ, խաղաղ ժողովուրդ հռչակուեցինք Փոքր-Ասիայում—և կոտորուեցինք: Խաչ ու խաչվառով դիմաւորեցինք քրիստոնեայ պետութեան դրօշակակիրներին—և կոտորուեցինք: Եղբայրական մեր ձեռքը մեկնեցինք մահմէտական մեր դրացիներին Անդրկովկասում—և կոտորուեցինք: Երբ արդեօք կը խրատուինք, երբ արդեօք կը հասկանանք, որ այդ արիւնոտ, աղեխարշ պատմութիւնը իր ողբերգական փիլիսոփայութեան հետ՝ իր ստիպողական հրահանգներն ունի, որոնց անպայման պէտք է համակերպել, եթէ ձգտում ենք պատուաւոր գոյութեան ու առաջադիմութեան:

Մենք չենք, որ պիտի ընդդիմանանք համերաշխութեան քարոզին,—մենք, որ քարոզում ենք այդ գաղափարը նոյնիսկ բարբարոս, արիւնռուշտ քրդերին: Մենք չենք, որ պիտի ժխտենք խաղաղասիրութեան ու համերաշխութեան ընազդի մեծ, հրաշագործ նշանակութիւնը.—Նրանք բարձրագոյն առաքինութիւններ են և ամենաքաղաքակիրթ մարդկային համայնքների պարծանքն են կազմում:

Հայ ժողովրդի մէջ ևս նրանք վաղուց ի վեր արմատներ են ձգել... Պարծենա՞նք արդեօք—ոչ: Այդ առաքինութիւնները մեր ուժն են կազմում և միանգամայն մեր թուլութիւնը: Խաղաղասիրութիւնը, առանց կռուելու, դիմադրելու պատրաստականութեան, մինչև իսկ այսօր, քսաներորդ դարում, դեռ բացասական մի երևոյթ է, կուզէք, նոյնիսկ անօրմալ, հակահասարակական: Դեռ դժբախտաբար շատ հեռու է մեզնից սոցիալական խաղաղութեան պանծալի շրջանը.—գոյութեան կռուի վարդապետութիւնն է, որ իր անողոք պահանջներն է առաջադրում ամէն տեղ և ժողովուրդները գիտակցաբար կամ բնազդօրէն վաղուց ըմբռնել են, որ խաղաղասիրութիւնն ու կրաւորական համակերպութիւնը բաւական չեն այս անիծուած աշխարհում, որ անհրաժեշտ է և ռազմական դաստիարակութիւն, անհրաժեշտ են այնպիսի առաքինութիւններ, որոնցով բարձր, կուլտուրական համայնքները ոչ միայն պատկառանք, այլև վախ ներշնչեն իրենցից ստոր, բիրտ, վայրենաբարոյ համայնքների մէջ, անհրաժեշտ է զինուած լինել ազդու զէնքերով:

Ժամանակ է, որ մենք ևս ըմբռնենք այդ ճշմարտութիւնը—և ըմբռնենք ազգովին, ոչ սահմանափակ փոքրամասնութեամբ: Բագի հսկայական ողբերգութիւնը միանգամ ևս այդ պահանջն է դնում մշտահալած ու բազմաչարչար հայութեան առջև:

Զինուե՞լ ամէն տեղ,—ահա փետրուարեան արիւնոտ օրերի հրամայական պահանջը: Զինուե՞լ մասսայօրէն և միշտ պատրաստ հսկել, թէ ո՞ր կողմից է գալիս արիւնարբու ոսոխը: Եթէ ռուս կառավարութեան քաստմնելի դաւերը գարշանքի ու անէծքի ճիչեր են յարուցանում, եթէ մահմէտական բախտախնդիրների գազանային արարքները սիրտ են արիւնոտում, ապա ոչ պակաս վշտաբեր է մեզ համար և այն հանգամանքը, որ հայ ազգաբնակութիւնը իր աւանդական անփութութեան շնորհիւ, զէնքի չգոյութեան պատճառով (չենք խօսում բացառութիւնների մասին), մատնուում է մի անպատիւ նահատակութեան—չնայած որ վաղուց հրապարակում պտտուում էին շշուկները թիւրքերի պատրաստութիւնների մասին—և կոտորուում է ճանճերի պէս, նման իր թիւրքահայ եղբայրակիցներին: Բայց թիւրքահայը, խեղճ, իրաւաղուրկ պարիան, դեռ իր յարգելի պատճառներն ունի,—զէնք հայթայթելու և զէնք կրելու անյաղթելի խոչընդոտները...

Կովկասը Տաճկաստան չէ: Իսկ Պարսկաստանում պայմանները էլ աւելի նպաստաւոր են: Ինչո՞ւ մահմէտական սպառազէն ազգաբնակութեան դիմաց կանգնած չլինի ամէն տեղ, քաղաքներում և գիւղերում, նոյնպիսի զինուած հայ ազգաբնակութիւն: Դեռ պիտի սպասե՞նք, որ անարգ „Շէյթանի" ձեռքով բորբոքուած հրդեհը տարածուի ու ճարակէ ամբողջ հայ աշխարհը: Ահա՛ չարագուշակ լուրեր են տեղում նոյնիսկ Պարսկաստանից... Հայոց գաւառները պիտի համաձայնե՞ն ապրել այսուհետև մշտն-

ջենական սարսափի տակ, զուրկ ինքնապաշտպանութեան միջոցներից. . .

Զէնքի փրկարար ուժը, որ մենք դիտել էինք 15-ամեայ գործունէութեան ընթացքում Յաճկաստանի մէջ, շօշափելի կերպով երևան եկաւ և Բագէի աղետի օրերին: Մի փոքրիկ գրոհ „Դաշնակցութեան“ խմբերի կողմից— և երկու հարիւրի չափ մարդասպաններ գետին փուլեցին. իսկ ինչպէ՞ս սարսափահար փախչում էին 2-3 ֆէդայիների առաջ՝ զինուած սրիկաների վոհմակները, որոնք ամէն տեղ առիւծ են կտրում միմիայն իներտ ու անպաշտպան բազմութեան դիմաց:

Ի՞նչ կը լինէր արդեօք դրութիւնը, եթէ այդ ազատարար խմբերն էլ չ՝աջողէին դրսից ներս խուժել և Հայ ազգաբնակութիւնը ոչխարների հօտի պէս ձգէր իր ճակատագրին. ե՞րբ արդեօք կը հասնէր բազձալի հաշտութիւնը և դեռ քանի՞ հազար դիակներ կը գլորուէին արիւնածարաւ ամբոխի ձեռքով. . .

Եթէ հայկական դիմադրութիւնը սկսէր տեղնուտեղը, աւելի շուտ և աւելի ընդարձակ ծաւալով, հրդեհը կը հանգչէր, հաւանականօրէն, հէնց իր սկզբնաւորութեան մէջ և դա կը լինէր ծանրակշիռ, վճռական կարևորութիւն ունեցող մի հանգամանք.— մահմէտական ժողովրդի թափթփուկները Բագէի մէջ և Բագէից դուրս կը գիտակցէին միանգամ ընդմիշտ, որ այնքան էլ դիւրին բան չէ Հայ ժողովրդի վրայ որսի գնալը:

Այդ գիտակցութիւնն է, որ համերաշխութեան գաղափարի հետ միասին պիտի արծարծել, արմատացնել մահմէտական խուժանի մէջ, որպէս զի ազատ մնանք ապագայում նորանոր հայկական Կիշինևներից: Կ՝ուզէինք, ա՜հ, շատ կ՝ուզէինք լաւատես լինել հաւատալ, որ Բագէի դժոխքը առաջինը և վերջինը կը լինի. . . Սակայն անփոյթ լաւատեսութիւնից հազար անգամ աւելի լաւ է մտահոգ զգաստութիւնը:

Խոր ցաւով ենք արձանագրում, որ ստիպուած եղանք— ոչ առանց վարանումի և միանգամայն ինքնապաշտպանութեան բնազդով առաջնորդուելով—զէնքի դիմել Բագէի մեր վաղեմի դրացիների դէմ և այժմ էլ խոր, անկեղծ ցաւ ենք զգում, ուղղելով Հայ ժողովրդին վերը յիշատակուած մեր յորդորները:

Ի՞նչ արած, սակայն: Կան մութ, խաւար ուժեր մեր դժբախտ միջավայրում, որոնք մարդկերութեան նախնի, անյիշատակ դարերն են յիշեցնում և ընդունակ են որոշ նպաստաւոր պայմանների մէջ պայթել թշուառ հայութեան գլխին ու նրբացրած գաղանութիւններով աշխարհը սարսեցնել: Շա՜տ արդէն վայելեցինք կոտորածների հռչակը—հերիք է: Երբէք յարձակողական ախորժակներ չենք ունեցել, երբէք թալանի, աւարի արշաւանքներ չենք խրախուսել: Մեր հիմնական մտահոգութիւնն է եղել ամէն տեղ՝ պատրաստել մեր խեղճ, հալածական ժողովրդին, վարժեցնել նրան ինքնապաշտպանութեան դպրոցի մէջ, ապահովել նրա խաղաղ ու կուլտուրական գոյութիւնը բռնաւորների հարուածների դէմ: Մեր ճակատագիրն է՝ լինել ամէն տեղ սխալ հասկացուած կամ բնաւ չհասկացուած. Յաճկաստանում քրդերն են ջլատում հակասուլթանական մեր դիմադրութիւնը, մոռանալով իրենց սեփական շահերը, անտես առնելով մեր համերաշխութեան քարոզը: Կովկասում էլ թիւրքերն են սկսում գործիք դառնալ բռնակալութեան ձեռքում և անդամալուծել հակացարական մեր շարժումը, որ նպատակ ունի դարձեալ ամբողջ երկրի բարգաւաճումը. . . Իրողութիւնը չափազանց դառն է և մենք բոլոր սրտով փափագում ենք, որ թիւրք ամբոխի գիտակցութեան այդ յանկարծական խաւարումը լինի ժամանակաւոր, լինի վաղանցուկ:

Հաւատարիմ իր լաւագոյն աւանդութիւններին՝ „Դաշնակցութիւնը“ այսուհետև աւելի մեծ եռանդով առաջ կը մղէ եղբայրական համերաշխութեան քարոզը մահմէտական դրացի ազգերի մէջ, ձգտելով իր ուժերի սահմաններում փութացնել այն օրը, երբ Հայ, թիւրք, վրացի և բոլոր տարրերը, մոռացած ազգայնական մանրամունր գժտութիւնները, մի ներդաշնակ բանակ կը կազմեն բռնապետութեան դէմ և կը նուաճեն Կովկասեան ազատութիւնը:

„ԴՐՕՇԱԿ“Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԱԳՈՒ, 11 փետրուարի

Արիւնահեղ ընդհարումների օրերին՝ Դաշնակցութեան Կենտրոնական կոմիտէն ուղղեց Լշխան Նակաշիձէին սպառնագիր, նրա վրայ զցելով պատասխանատուութիւնը: Յանցաւորի պատժելը վճռած խնդիր է տէօրիստական կազմակերպութեան համար:

ԹԻՖԼԻՍ, 11 փետրուարի

Ստացած տեղեկութեան նայելով՝ Դաշնակցութեան խմբերը արիւնհեղութեան երրորդ օրը զինուեցին և դուրս եկան ժողովուրդը պաշտպանելու: Ցեղափոխական զինուորների անձնուիրութիւնը, Դումանի դեկավարութեամբ, անսպասելի ազդեցութիւն արաւ մահմէտական խուժանի վրայ: Տեղական կոմիտէն վճռած է եղել դիմել ռումբի, եթէ խաղաղութիւնը չվերահաստատուէր անմիջապէս:

ԹԻՖԼԻՍ, 19 փետրուարի

Գուրիայում գիւղացիները ապստամբական շարժման մէջ են: Սկսած են զինուած ցոյցեր թէ կառավարութեան, թէ ազնուական կալուածատէրերի դէմ: Իշխանութիւնը զինուորական ուժ ուղարկեց գեներալ Ալիխանովի դեկավարութեամբ: Գեներալ Մալամսիին ներկայացած պատգամաւորութիւնը խնդրեց արիւնհեղութիւն առաջ չբերել: Գուրիա է ուղարկուած պաշտօնեայ Գրեմ-Կրիյ՝ գիւղացիների գանգատները լսելու և խաղաղացնելու նպատակով:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՌԻՒ

ԿՌԻՒՆԵՐ

ՍԱՍՆՈՅ ԵՒ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակ. № 2-ի)

Առաւօտը բացուելուն պէս՝ թնդանօթները սկսեցին որոտալ և ռումբերը պայթեցին Ալիանքի շուրջը. շատերն ալ խրուեցան ձիւնի հաստ կեղևի մէջ և մնացին առանց պայթելու։ Զիւնապատ և սառած գիրքերէն ֆէդայու մօսինը իր բերանը թշնամիներուն դարձուց։ Դիմացի ձիւնապատ, սպիտակ տարածութիւնը սևցած կ'երևէր թշնամու անհամար շարքերէն։ Թնդանօթներու բերնէն թռչող առաջին ռումբերու հետ սկսաւ շարժիլ դաշտի այդ սև ֆօնը։ Երկարաձգուեցաւ, երբեմն ամփոփուեցաւ և երբեմն բաժան-բաժան եղաւ, բայց զօրքերու կարգերը միշտ առաջացան, սուիններու անտառը փայլեց և հրացանները միահամուռ կրակեցին։ Քրդերու բազմութիւնը ոչ կարգ կը ճանաչէր և ոչ կանոն. թրերը մերկացուցած, հարայ-հուրայ տալով կ'առաջնորդէր բանակը։

Հայ ֆէդային չոքած ձիւնի ու սառոյցի վրայ, մօսինը կուրծքին սեղմած, թափեց գնդակներ թշնամու վրայ. հրացանի բերնէն թռչող ամէն մի գնդակ իր սրտէն պոկուող մի-մի վրիժառու սլաք լինէր կարծես, որ կերթար թշնամիներու կուրծքին մէջ մխելու. իսկ վերև փողփողացող դրօշակը մահ կամ ազատութիւն կը կանչէր։ Մոսկալի էր կռիւը. թշնամու գնդակները կարկուտի նման կը թափուէին և ջարդ ու փշուր կ'ընէին քար, հող, թուփ և կը սարսեցնէին լեռ ու ձոր. բայց անսասան էր ազատութեան տենդով բռնուած ֆէդային, որ արագ-արագ գնդակներ կը տեղաւորէր թշնամիներու սրտին մէջ. առանց ուշադրութիւն դարձնելու չորս կողմ վժվժացող գնդակներուն և դէս ու դէն փշրուող, թափուող քարերուն ու հողերուն։ Թշնամու կարգերու մէջ հաղիւ ժամանակ կը գտնուէր փոխադրելու դիակները։ Թշնամին շատ յամառ կ'երևէր. ոչ մի զոհի առաջ նա միտք չունէր կանգ առնելու, միայն կը սեղմէր իր կարգերը և յառաջ կը քալէր։ „Մենք այսօր Կէլիէկուզան պէտք է առնենք, Անդրանիկ փաշան Տափրկն է, Գէորգ Զաւուշ Իշխանձորն է", կը պոռային։ Թշնամու անդադար առաջ խաղացող կարգերէն մերոնք պարտաւորուած էին փոխել իրենց դիրքերը։ Աւետիս, Իսօն, Մարտիրոս և Մոկացի Քեռին կը կուէին Անտոքի կողին վրայ. Հրայր, Սեպուհ, սէմալցի Կրպէն, Գէվօն և Մուշեղ որոշել էին անպայման կերպով կտրել թշնամիներու առաջ և մեռնել կամ ետ քշել զանոնք։ Անհաւասար ու կատաղի կռիւն մէջ կը վիրաւորի Սեպուհը, կրսպաննի աղբեցի խոհեմ ու ճարտար Գէորգը։ Հրայր տեսնելով Սեպուհի վիրաւորուիլը, կերթայ ետևէն զայն հետը վերցնելու. Սեպուհ կը կանչէ, կ'աղաչէ Հրայրին թողնել զինք, չգնալ իր ետևէն, իրենց պաշտպանութեան համար աւելի բարձր, ամուր դիրքեր բռնել. բայց Հրայր չ'ուզեր անոր լսել ու կը պատասխանէ. „Կամ կրսպաննիմ, կամ քեզ ալ ազատելով հետս կը տանիմ"։ Թշնամիէն եկած գնդակները աւելի ու աւելի կը հետևին Հրայրին, մինչև որ նա կ'ընկնի անոնց տարափին տակ։ Վիրաւոր Սեպուհը կը համբուրէ անձնազոհ ընկերոջ դիակը և կը հեռանայ սող տալով. քիչ վերջ նկատելով որ բաւական ծանր է իր ստացած վէրքը, դաշոյնը կը հանէ ու կը փորձէ սիրտը խրել, բայց ընկերները նկատելով այդ, կ'առնեն դաշոյնը ձեռքէն և զինք ալ վերցնելով հետերնին կը տանեն։ Մերոնք իրենց ուժերը կ'ամփոփեն Բէրբէրի կիրճի բերանը, ուր թիւրք զօրքը կը կուէր ամենամեծ թափով անցքը գրաւելու համար, որ իրենց պէտք է տանէր դէպի Կէլիէկուզան։ Աւետիս, Իսօն, Համլօն պինդ կերպով գոցեր էին կիրճի բերանը. կուի միջոցին մի սասունցի կին բարձր դիրքի մը վրայ կանգնած, կը կանչէ, կը խրախուսէ կուողներուն ասելով. „Հեթէ՛, տղե՛ք, մալավա խպըտէ՛ք, Անթուան փաշէն Մաճերնու դէն եկաւ, Գէորգ Զաւուշ էկաւ Իշխանձորի կողմէ, տէ խըպըտէ՛ք, ձեր հոգուն մատա՛ղ, ըռամ կոտրվաւ, պաւէմըն ժի խըպըտէք, ազգի հաց հալալ ըլի՛ ձի, հայ զինուորնե՛ր, որն որ պաշ չխըպըտի, կնկտուս սաւան էնոր գլխուն թալենք, հալա դէ հալա, դէ հալա, ասկարէ ռամ կոտրվաւ, հայոց իմտատ շատցաւ"։

Երկար չանցնի. տղայոց անսխալ հարուածներէն կիրճի բերան զօրքը կանգ կ'առնի, գլուխը կը կորնցէ և կըսկսի ետ քաշուիլ։ Փողը յառաջանալու, յարձակուելու նշան կուտայ, բայց զինուորները ջարդուած ետ ու ետ կը նահանջեն. այն ատեն մերոնք վրայ կուտան, ահագին զօրքը նախիրի նման առջևնին առած կը հալածեն և շատերը ողջ-ողջ բռնած կը կոտորեն։ Փախչող զինուորներէն 41 հոգի չկարողանալով փախչել՝ աննկատելի կերպով կը պահուըտին ձեան հիւսի մը տակ և կըսպասեն հայերու քաշուելուն, որպէս զի գնան և միանան բանակին։ Կիրճի կուին մէջ ծնկներէն ծանր կերպով կը վիրաւորուի ախլցխացի Մատօն (Մարտիրոս). երբ որ ընկերներէն մէկը կը մօտենայ անոր, թևը կը մտնէ և կ'ուզէ դուրս տանել կուէն, նա կը պատասխանէ. „Դուք ինձնով մի զբաղուիք, յաղթութեանը նայեցէք դուք, յաղթութեանը. եթէ թշնամիներ գան, ես կարող եմ զիս քարէ մը վար նետել։

Այժմ տեսնենք, թէ ինչ վիճակի մէջ էին Զայի գիծը պահպանող մեր ընկերները։ Հաճին և Մակար Զայի գլուխներ դիրքեր էին բռնած, իսկ Մուրատ մի քանի ընկերներով մնացեր էր ջրի ափերը՝ չթողնելու համար որ թշնամին ջրէն անցնի։ Բայց զօրքը յանկարծակի կը յարձակի, այնպէս որ Մուրատ ընկերներով ետ կը քաշուի յարմար դիրք բռնելու, երբ կը տեսնէ որ յարմար դիրք չկայ, ձայն կուտայ ընկերներուն ետ դառնալ և անմիջապէս կը չոքեն ձիւնի մէջ և կըսկսին կուիլ։ Թշնամու և անոնց մէջ տեղի տարածութիւնը կը լինէր մօտաւորապէս 600 քայլ։ Մօսիններէն արձակուած առաջին գնդակները գետին կը գլորեն թշնամիներէն մի քանիսը։ Հաճին ալ բլրի գագաթէն կրակ կը թափէ թշնամու վրայ. այսպէս թիւրքերու թափը կը կոտրուի և անոնք չեն համարձակիր աւելի առաջ գնալ։ Իրենց փոքր ուժի դէմ թշնամիների գնդի այդպէս անսպասելի կերպով կասիլը՝ մեծ ոգևորութիւն կը ներշնչէ տղայոց և Մուրատ ընկերներու հետ պար կը բռնէ, ապա երգերով և կեցցէներով կը շարունակեն կռիւը մինչև ժամի 6-ը։ Ժամը 7-ին Տափրկի կողմէն Անդրանիկն ալ կը հասնի։ Ինչպէս սկզբին թիւրքերն էին յարկարծակի բերած և ետ քշած Մուրատն ու ընկերները, այժմ ալ կարգը մերոնց կուգայ փոխադարձաբար թիւրքերուն ընել։ Միա-

ցած ուժերով հայերը կը յարձակին Թիւրք զինուորներու վրայ և կոտորելով կը հալածեն մինչև Շէնըք, ուր տակաւին կ'որոտային Թնդանօթները։ Վալին, որ բանակի հետ եկած էր անձամբ հրամայելու, տեսնելով որ զօրքը յաղթուած կը նահանջէ, ինքն ալ կը քանդէ վրանները և զօրքերը հաւաքելով Մուշ կը վերադառնայ։

Յաղթութիւնը հայերու կողմն էր։ Հայ զինուորներէն մի քանիսի ոգևորութիւնը այն աստիճան էր, որ հակառակ թանձրացող մութին, կուզէին էլի յառաջ արշաւել՝ բանակի ետ մնացած մասերու վրայ։ Անդրանիկի կարգադրութեամբ բոլորը միասին հաւաքուեցան, վերցուցին Հրայրի և միւս նահատակ ընկերներու մարմինները և եկան Կէլիէկուզան։ Հանդիսաւոր կերպով Հրայր թաղուեցաւ Սերոբ-Աղբիւրի մօտ։

Այդ իրիկուն հայ զինուորները առհասարակ վերին աստիճանի աննախանձելի դրութեան մէջ էին։ Ամբողջ կուի ընթացքի մէջ վերջին աստիճանի ջղային լարուած դրութիւնը, տեղացող կարկուտն ու անձրևը, քաղցածութիւնը՝ յոգնեցուցած էին բոլորը։ Այդ կուին մէջ մերոնցմէ ինկան Հրայր, Մարտիրոս, Կրպէն, Աղբեցի Գէորգ, Կէլիցի երկու երեխաներ 10-11 տարեկան և պառաւ կին մը։ Թշնամիէն սպաննուեցան 800-1,000 հոգի, այնպէս որ կռիւներու տեղերը և զօրքի նահանջի ճամբան ամբողջապէս արիւնով ողողուեցան։ Մերոնք գրաւեցին 53 մավզէր 3,000 փամփուշտով։ Կուին մասնակցող ութ վաշտ զօրքը այսպէս էր բաժնուած. — երկու վաշտը կը կուէր Զայի մօտ, իսկ վեց վաշտը 3-4,000 քրդերու հետ կը յարձակէր Ալիանքի կողմէն։ Կռիւը տևեց արշալոյսին՝ ժամը 11-էն սկսած մինչև երեկոյեան ժամը 1-ը (ը. թ.)։ Թշնամին նոյն օր պրեց Շէնըք և Սէմալ գիւղերը։

7. ՄԵՐԿԵՐԻ ԿՌԻՒԸ

Ապրիլ 14-ի առաւօտեան, ժամը 10-ին, 6-700 քրդեր և 2-300 զօրքեր յարձակուեցան Կէլիէկուզանէն երկու ժամ հեռու գտնուող Մերկեր գիւղի վրայ։ Մերոնք այդ օրը զբաղուած էին դատարկ փամփուշտները լեցնելով։ Մուրատ իր հետ վերցուցած մի քանի զինուորներ գնաց Մերկեր. բաւական կուէլէ յետոյ՝ Թշնամին թողուց աւարը ու փախաւ։ Այդ օր կռիւը շատ թեթև անցաւ։

Ապրիլ 15-ի առաւօտեան, Գէորգ Զաւուշ իր ընկերներով եկան Իշխանձորէն։ Գէորգը և Խաս գիւղի Փոթորիկ քահանան, երբ նոր կը բացուէր արշալոյս, բարձրացան Բէրբէրի հովիտի վերև և դիրք բռնեցին՝ ճիշդ այնտեղ, ուր նախորդ օր դիրք էին բռներ Թիւրք զինուորները։ Քիւրդերը կառավարութենէն նոր ուժ ստանալով՝ երկրորդ անգամ փորձեցին Մերկերի վրայ գնալ, մերոնց տեսնելով և Թիւրք պահապանների տեղ ընդունելով անոնց՝ կը բարևեն, անոնց բարևի պատասխանը կը լինի Գէորգ Զաւուշի գնդակը։ Թշնամիներ յանկարծակիի գալով կը կրակեն հրացանները. կռիւը կը տևէ երկու ժամ. շուտով կը հեռանան քրդերը՝ իրենց հետ տանելով մէկ սպանուած և մէկ վիրաւորուած։

8. ԻՇԽՆՁՈՐԻ ԿՌԻՒԸ

Ապրիլ 16-ին Խանքի և Փուսուրի կողմէն եկած էր երկու վաշտ զօրք գոցելու համար Իշխանձորի ճամբան, որպէս զի ժողովրդէն ոչ ոք դուրս չգայ գիւղէն գաւառ գնալու համար։ Կռիւներու սկիզբը գրեթէ իվեր՝ վտանգի և յարձակման ենթակայ գիւղերը կամաց-կամաց պարտաւորուած էին քաշուիլ դէպի Սասնոյ կեդրոնական մասը՝ գաւառը։ Այժմ կարգը եկած էր Իշխանձորցիները տեղափոխելու։ Իշխանձորի մէջ, իբրև քաջ կուողներ կը գտնուէին Մուշեղ, Ապրօն, Լևոն, Մուկուչ և Տէրտէրի տղաները. ասոնք մէկ կողմէն կը կուէին և միւս կողմէն ժողովուրդը կը տեղափոխէին։ Թիւրք զօրքին միացած էր նաև Խուլբի բոլոր աշիրէթները։ Կռիւը սկսելուն՝ հաւարը հասած էր Տալորիկ։ Սմբատ, որ այդ ժամանակ Տալորիկ կը գտնուէր, չկրնալով իր դիրքերը թողնել, օգնութեան կ'ուղարկէ Հլողինքի իշխաններին, Պալոյի Գէվոյին և Օսմանին։ Ասոնք մի քանի զինուորներով Իշխանձոր կը հասնին, կը բարձրանան Կապլորաքար և կը կուին զօրքի հետ ճակատ առ ճակատ. իսկ վերևէն ալ ձիւնը առատ կերպով կը թափի։ Երբ Իշխանձորի ժողովուրդը կը փոխադրուի և թշնամիները մութի պատճառով կը քաշուին, մեր կտրիճներն ալ կը վերադառնան Տալորիկ։ Թշնամիներէն այդ օրը կը սպաննուին 5 հոգի։

Ապրիլ 17-ին՝ Վահան Նամակ էր գրած Տալորիկ, Սմբատին, որպէս զի սա ժողովուրդը Կէլիէկուզան փոխադրէ։ Միևնոյն ժամանակ թշնամուն դաշտի մէջ զբաղեցնելու և չթողնելու համար որ իր ամբողջ ուժերը կեդրոնացնէ Սասնոյ վրայ՝ կը կարգադրէ որ Առաքել և Պօղոս հինգ ընկերներով դաշտ գնան այնտեղ ալ կռիւներ սարքելու։ Ասոնք երբ Կոփ կը հասնին, կը հանդիպին պալաքցի քրդերու, որոնց հետ $1\frac{1}{2}$ ժամ կուելէն յետոյ, կ'անցնին դէպի դաշտ։ Ապրիլ 10-ին պալաքցիներ, Խուլթի քրդեր և Մուսաբէգի եղբայր Ղասըմ իր աշիրէթով, ընդամէնը 2,000 հոգի, կը յարձակին Կէլիէկուզանի մի թաղի վրայ, ուր կը կուէր Մխիթար։ Կռիւը կը տևէ 3 ժամ։ Քրդերը կը կորսնցնեն 8 հոգի և 8 հրացան։ Այս անգամ կուողներն էին մասնաւորապէս Ավոյի Կարապետ, Եղօ, Զաթօ, շուշնամերկցի Առաքել, Գրգօ, քոփեցի Փուրթօ և մի քանի աղբեցիներ ու Կէլիէկուզանցիներ։

9. ԿԷԼԻԻ ԿՌԻՒԸ

Կառավարութիւնը իր ուժերը աւելի կը կեդրոնացնէր Սասնոյ մէջ. մինչև ապրիլի 18-ը՝ 40 հազար զօրք հաւաքեց Սասնոյ շուրջը։ Կառավարութիւնը որոշած էր մի վճռական յարձակումով ջնջել սասունցիներու ուժը և լռեցնել բողոքի ամէն ձայն։ Վտանգը անխուսափելի էր։

Անդրանիկ իր մօտ կը կանչէ բոլոր զինուորները և կը պատրաստէ ապագայ դիմադրութեան ծրագիրը. Կէլիէկուզանի շուրջը կը նշանակէ դիրքեր, կ'որոշէ խմբապետներ ու անոնց օգնականներ և ցոյց կուտայ թէ ո՛վ ի՞նչ դիրքի վրայ պէտք է լինի։

Զաթօն, Փուրթօն, Սրապիոն և մի քանի աղբեցի կտրիճներ կը բռնեն Տավրների վերև մի աւերակ վանքի տեղը։ Մխիթարի խոռը (կէտիկ) կը բռնեն՝ Մակար, Կարապետ, Եղօն։ Մաճելնի (աղբիւր) գլուխը՝ Հաճին, զինուոր Գրիգոր, Օսէյի Ավէն և Կիրակոս։ Կարմիր քարերը՝ Սարգիս և Ղազար։ Տալազարայ գլուխը՝ Մոկացին, Քեաթիպ Մանուկ և Ռէս Մանուկ։ Բողնոցներ՝ Մխիթար, Զօռէ Օհան և մի քանի շէնըքցի, սէմալցի ու կէլիէկուզանցի կտրիճներ։ Քէփրիշէրիֆ խան և Աղլէզի քարերը՝ Գէորգ Զաւուշ և Անդրանիկ։ Բէրբէրի հովիտի

բերանը՝ Աւետիս և Արամ։ Ռաջլներ՝ Տիրացու Օհանէսի գոմը՝ Մուրատ և կուրավցի Քեռին։

Ապրիլ 20-ին պէտք եղաւ ամրացնել նաև հետևեալ դիրքերը.—

Ամպրների գլուխէն մինչև Հաշկայ-Մուշէն պաշտպանեցին՝ մուշեցի Սմբատ և փարկացի Սարգիս։ Հիրինակու արտերը՝ Անդրանիկ, Մուրատ և Աւետիս։ Խտանայ կողմէն մինչև Փուշփուշի տակը՝ Գէորգ Զաւուշ, Արամ, Սմբատ և մոկացի Գրիգոր։

Իւրաքանչիւր խմբի մէջ կը գտնուէր 10 կանոնաւոր հրացան, որոնցմէ 3-4-ը մսին, մնացածները բերդանկ. կանոնաւոր հրացաններուն կը միանար և չախմախլիով զինուածներ։

Թշնամին իր թնդանօթները աւելի կը մօտեցնէր և կը զետեղեր մերոնց բռնած դիրքերու դիմաց։ Թնդանօթաձգութիւնը երկու օր շարունակեցաւ։ Կուի միջոցին Հաջին և զինուոր Գրիգոր իրենց համար նշանակուած դիրքէն աւելի առաջ անցան և սկսաւ կուրծք կուրծքի կռիւը. մերոնցմէ 11 հոգի կը վիրաւորուին ու ետ կը քաշուին նշանակուած դիրքի մէջ։ Թշնամու հրացանները քիչ անգամ կը գործէին, բայց թնդանօթները երբէք չլռեցին, մեր դիրքերէն յայտնի չէ ո՞ր մէկի վրայ 32 ռումբ արձակուեցաւ. Սէմալի և այս կռիւներուն 15 թնդանօթներ ընդամէնը 1,500 ռումբ թափեցին հայերու դիրքերու վրայ։

Կռիւն ու դիմադրութիւնը տևեց մինչև ապրիլի 22-ը։ Մերոնց փամփուշտը սպառելու կը մօտենար, ատոր համար չուզեցին երկար դիմադրութեան մէջ իրենց ամբողջ պաշարը սպառել, մտածելով որ մնացածը աւելի նեղ օրուան համար հարկաւոր պիտի լինի։ Ալուճակի մէջ որոշեցին պարպել Կէլիէկուզանը, ուր հաւաքուած էր գիւղի բնակչութիւնը և դաշտ իջեցնել ժողովուրդը։ Զինուորներէն 100 հոգի, ժողովուրդը հետը վերցուցած, ուղևորուեց դէպի դաշտ։ Կէլիէկուզանի շուրջը, դիրքերէն դիմադրութիւնը շարունակուեց, մինչև որ ժողովուրդը պարպուեցաւ։

Անդրանիկ, Վահան և Գէորգ Զաւուշ բարձրացան Կըուըշէկ այնտեղ շարունակելու կռիւը։ Իսկ Մուրատ, Սմբատ, Քարհատ, Աւետիս և անոնց հետ եղող զինուորները, ընդամէնը 115 հոգի, ժողովուրդը անցկացնելէ և դէպի դաշտը ճամբելէ յետոյ, կ'ուղևորուին ուրիշ ճանապարհով մը դէպի դաշտ։ Անոնց միացեր էին նաև թիւրք զինուորներէն 4 հոգի, որոնցմէ մէկը մասնաւորապէս լաւ կը կուէր քիւրդերու և զօրքերու դէմ։

(Շարունակելի)

ԲԱԳԻՒ ԴԷՊՔԵՐԸ

(ՆԱՄԱԿՈՎ)

I

Բագու, 10/23 փետրուարի

Կառավարութիւնը հասաւ իր նպատակին։ Ամիսներից ի վեր նա թիւրք ամբոխին գրգռում էր հայերի դէմ։ Վերջերս սկսեց նաև զինել թիւրք Աշեր բէյի փետրուարի 6-ին տեղի ունեցած սպանութիւնը եղաւ ազդանշան։ Կառավարութիւնը, ուզենալով խեղդել սպասող կինուած ցոյցը, որի մասին լուրեր էին պտտում քաղաքում՝ դիմեց իր սովորական „միջոցին"։ Ահա փաստեր։

Մի քանի օր առաջ նահանգապետ Նակաշիձէն առաջարկում է հարուստ թիւրքերին մի քանի օրուայ համար պաշար գնել, պատրաստելով, թէ հայերը ցոյց են պատրաստում։ Միաժամանակ ոստիկանութեան ստորին պաշտօնեաները, որոնք անմիջական կապեր ունեն ժողովրդի տականքների հետ, թիւրք սրիկաներից կազմում են խմբեր և զինում օֆիցերական ատրճանակներով։ Կուի ժամանակ թիւրքերի մեծ մասը այդ ատրճանակներով էր զինուած։ Այդ դեռ բաւական չէ։ Կուի օրերին՝ թիւրքերը Զեմբերիքէնտի կողմերում շարունակ մտնում էին ոստիկանատուն և փամփուշտներ ստանում։ Բալախանիից և Սև քաղաքից Բագու էին գալիս զինուած թիւրքեր և հայեր։ Առաջիններին կոտորելու և թալանելու համար, իսկ հայերը՝ յեղափոխական զինուորները՝ իրենց անկէն ժողովրդին պաշտպանելու համար։ Պահապան կազակները քաղաք մտնող թիւրքերին բաց էին թողնում՝ ազատ և անարգել, իսկ հայերին խուզարկում և զէնքերը խլում։ Այս բոլորը փաստեր են, որոնք ժամանակին—եթէ դատ և քննութիւն լինի—բիւրաւոր ականատեսների վկայութեամբ կ'ապացուցուի։

Անցնենք կռիւներին։ Առաջին օրը երկու կողմից էլ 6 հոգի սպանուեցին և վիրաւորուեցին։ Ոչ ոք չէր ենթադրում և չէր հաւատում, որ դրան կը հետևի մի սոսկալի կոտորած։ Միայն կառավարութիւնն էր, որ նախատեսնում էր ամէն ինչ և կրակի վրայ իւղ ածում։ Միւս օրը հաղարաւոր թիւրքեր, յանկարծ, անսպասելի կերպով յարձակում գործեցին անզէն ժողովրդի վրայ և սկսուեց կոտորածը... Ոստիկանութիւնը ոչ միջամտեց և ոչ էլ օգնեց։ Նախորդ ցոյցերի ժամանակ հազարաւոր զօրքեր էին երևում, իսկ ջարդի օրը և ոչ մէկը կար... Հայերը դիմեցին նահանգապետին և օգնութիւն խնդրեցին։ Իսկ նա անդադար նոյն էր պատասխանում. „Զօրք չկայ, ի՞նչ կարող եմ անել"։ Դիրք ունեցող հայերը խնդրեցին զէնք տալ հայերին ինքնապաշտպանութեան համար — մերժուեց։ Հ. Յ. Դաշնակցութեան տեղական կոմիտէն գրաւոր դիմումով յայտնեց նահանգապետ Նակաշիձէին. „Պաշտպանեցէք ժողովուրդը, թէ չէ անձամբ պատասխանատու կը լինէք"։ Դարձեալ ոչ մի արդիւնք։

Իրիկնադէմին միայն զօրքեր երևացին, այն էլ, ինչպէս երևում է, որոշ հրահանգներով։ Նախ երկար ժամանակ զէնքի չէին դիմում և այդպէս կողմնակի կերպով խրախուսում էին թիւրք ամբոխին, իսկ կազակները մեծ գումարներ էին պահանջում անզէն ընտանիքներին տնից տուն, կամ տնից կայարան փոխադրելու համար։

Դաշնակցութեան կոմիտէն երկու օր ապարդիւն սպասելուց յետոյ, որոշեց դիմել զէնքի։ Սրտի ցաւով նա խաչ դրեց տարիների համերաշխութեան փորձերի վրայ, հաւաքեց իր զինուորներին և քաղաքի մեծ մասը թիւրքերի յարձակումներից պաշտպանեց։ Յեղափոխական զինուորները երկու ժամուայ ընթացքում քաղաքի կենտրոնից վռնտեցին թիւրքերին։ Դա միակ օգնութիւնն էր, որ անպաշտպան ազգաբնակութիւնը ունեցաւ ջարդի օրերին [1])։

Ամբողջ ազգաբնակութիւնը միաձայն մի բան է պահանջում՝ գտնել յանցաւորներին։

---

1) Պարտք ենք համարում յիշել, որ դաշնակցական խմբերի շարքերում կուում էին երկու հնչակեան, որոնք դրին մեր տրամադրութեան տակ 375 ատրճանակի փամփուշտ։

(Շարունակ. տես երես 39)

ԲԱԳԻՒ ԱՂԷՏԻ ՀԱՅ ԶՈՀԵՐԻՑ

ՓՈՂՈՑԻ ՄԷՋ ԸՆԿԱԾ ԴԻԱԿՈՑՑ



ԻՐԵՆՑ ԸՆԿԵՐԱՆՆԵՐՈՒՄ ԱԾԽԱՑԱԾ ԴԻԱԿՆԵՐ



ՄՕՐ ԱՐԴԱՆԴԻՑ ՀԱՆՒԱԾ ԵՐԵԽԱՆԵՐ

II

Բագու, 12/25 փետրուարի

Շարունակում եմ նկարագրել, ժամանակագրական կարգով։

1) Այսօր փետրուարի 7-ին, տեղական հայ և թիւրք ազդեցիկ քաղաքացիներ գնացին Նահանգապետի մօտ և խնդրեցին, որ միջոցներ ձեռք առնի քաղաքում կատարուած գազանութիւններին վերջ դնելու։ Նահանգապետը նրանց ընդունում է շատ սառն կերպով և բացարձակ յայտնում, որ թէ ոչինչ անել չի կարող, առարկելով, որ զինուորական ուժ չունի։ Տարօրինակ պատասխան, — ամենամեծ ցոյցերի ժամանակ նրա ունեցած ուժերը բաւական են լինում մի երկու ժամուայ մէջ ցրուելու ցուցարարներին, իսկ կոտորածի ժամանակ՝ ուժը անհետանում է...

2) Այսօր հայոց առաջնորդի մօտ են եղել Նահանգապետ Նակաշիձէ և մահմէտականների ղազին։ Առաջնորդը դիմել է Նահանգապետին ասելով, որ իշխանը թոյլ է շարժւում և հարկաւոր միջոցներ ձեռք չի առնում կոտորածը կանգնեցնելու համար, աւելացնելով, որ „եթէ ուզենայիք, երկու ժամում կարող էիք ընդհատել այս բարբարոսութիւնը“։ Նահանգապետը աչքերը գետին յառած՝ լռութիւն է պահպանել։ Յետոյ երբ առաջնորդը նոյնպիսի նկատողութիւններով դիմում է թիւրք կրօնաւորին և հասկացնում, թէ որչափ անմիտ և աննպատակ բան է՝ թոյլ տալ երկու հարեան, միասին ապրող ժողովրդին իրար խողխողել, ղազին թիւրքերէն լեզուով պատասխանում է. „Ես էլ լաւ եմ հասկանում այդ, բայց մեղաւորը մենք չենք, այս ողջ եղեռնագործութիւնը սրա սարքած բանն է“, աւելացնում է նա, պարզ ակնարկելով Նահանգապետ Նակաշիձէին...

3) Հայոց վարդապետը, որ ապրում է եկեղեցու մօտ, պատմում է հետևեալ փաստը։ Մի խումբ անզէն հայեր անցնում էին Պարապետովի։ Ցանկարծ փողոցի մի անկիւնից վրայ պրծաւ զինած թիւրքերի մի խումբ և յարձակւեց փախչող հայերի վրայ՝ յետևից ատրճանակներ պարպելով։ Փախչողներից մէկը ընկաւ, միւսները անյայտացան։ Պարապետում կարգը պահպանելու համար նշանակուած կօզակները և զինուորները տեսան, բայց տեղից էլ չշարժւեցին, նրանք զրոյց էին անում իրար հետ։

4) Մի այլ ականատես պատմեց հետևեալը. „Ես անցնում էի Տէլէֆօնեան փողոցով, երբ նկատեցի, որ մի խումբ զինուած հայեր են գալիս դէմս։ Ներքևից էլ գալիս էին կօզակները։ Վերջինները հայերին շրջապատեցին և հրացանների մի զալպ տուին օդի մէջ և փախցրին նրանց, մինչդեռ նոյն փողոցում ազատ կերպով շրջագայում էին զինուած թիւրքերի խմբեր, և կօզակները նրանց ոչինչ չէին անում։

5) Մի ռուս իսկական չինովնիկ, որի հայասիրութեանը կասկածել չի կարելի ամենևին, պատմում է իր աչքով տեսածը. „Ցիցիանովի փողոցում հայերին պատկանող շորեղէնի խանութները թիւրքերը թալանում էին և ամենահանգիստ կերպով ապրանքը կրում դէպի իրենց տները։ „Կարգը պահպանելու համար“ այնտեղ գտնուող կօզակները լուռ հանդիսատեսներ էին միայն։ Երբ մօտեցայ և հարցրի, թէ այս ինչ խայտառակութիւն է, որ թոյլ են տալիս իրենց աչքի առաջ խանութներ ջարդել և կողոպտել, պատասխանեցին. „նե պրիկազմիո“ (հրամայւած չէ)։“ Տեղական իշխանութեան կարգադրութեամբ՝ մի ամիս առաջ ոստիկաններից առել են նրանց ատրճանակները։ Երբ ոստիկաններին յանդիմանում էին նրանց բռնած չէզոք դիրքի համար՝ նրանք շատ խորհրդաւոր կերպով ցոյց էին տալիս իրենց կողքից կախուած ատրճանակի կաշէ պատեանները և գլուխները շարժում։ Այս փաստը ստուգուած է շատ մարդոց ձեռքով։

6) Շրջակայ թիւրք գիւղերից՝ բերդաններով զինուած թիւրք խմբերը անարգել թափւում էին քաղաքը։ Իսկ Բալախանիից եկած 40-50 հայ բանուորներին կայարանում կօզակները շրջապատում են, վերցնում են զէնքերը և վերադարձնում Բալախանի։ Այս փաստը վկայում են շատ շատերը, ինչպէս հայեր, նոյնպէս և ռուսները, որոնք իրենց աչքով են տեսել։

7) Քաղաքը ընդհանուր սարսափի մէջ է։ Ով որտեղ, ինչ շինութեան մէջ եղել է, այնտեղ էլ փակուած մնացել է, բացի շէկամօրուս և շէկահեր մարդկանցից, որոնց իբրև ռուսների, թիւրքերը խնայում էին։ Ուսումնարաններում՝ թէ տղայոց և թէ օրիորդաց, աշակերտները փակուած մնացել են երկար ժամանակ։ Հայ ծնողները հնարաւորութիւն չունէին իրենց երեխաների յետևից գալու։ Բանկերը, գրասենեակները, խանութները ամբողջապէս փակուած են։ Ձիաքարշը դադարել է, կառք ամենևին չկայ։ Կեանքը մեռել է։ Լսւում է միայն հրացանաձգութեան սարսափելի որոտը։ Հարուստ և բարեշէն քաղաքի փողոցները ահռելի պատկեր է ներկայացնում։ Դրակները թափուած են այս ու այն կողմը հաւաքող չկայ։ Շատ ընտանիքներ մնացել են անհաց և անջուր, բայց դուրս գալու հնարաւորութիւն չունեն, որովհետև թիւրքի թաղերում են ապրում։ Դրութիւնը սոսկալի է։

8) Բալախանիից հաղորդում են հեռախօսով, որ այնտեղ ևս սկսել է խմորումն և շարժում բանուորների մէջ։ Մի քանի տեղ ընդհարումներ են տեղի ունեցել։ Սաբունչիի հիւանդանոցն է բերուած 4 սպանուած, որից 3-ը հայ է, 1-ը ռուս։ Արդեօք թիւրքերից սպանուածներ կան թէ ոչ, յայտնի չէ. նրանք իրենց ընկածներին կամ վիրաւորներին հիւանդանոց չեն տանում, այլ իրենց տները։ Բիբի-Հէյբայթից նոյնպէս լուրեր են գալիս, որ այնտեղ էլ սկսել է շարժումն։ Հայ բանուորները այնքան յուզուած են, որ ձգել են աշխատանքը և պատրաստւում են քաղաք գալու։

III

Բագու, 21 փետրուարի

Գրում եմ ձեզ „ոտի վրայ“, ընկերներից մէկի բնակարանից։ Մենք այժմ պատերազմական դրութեան մէջ ենք։ Լսւում են անդադար հրացանի և ատրճանակի ձայներ։ Քաղաքը բաժանուած է երկու մասի — մի մասը հայերի, միւս մասը թիւրքերի ձեռքին է։ Երբեմն հայերն են յարձակւում և խլում նրանց դիրքերը, երբեմն թիւրքերը։ Փողոցներով մի-մի անգամ անցնում են կօզակներ, բայց ոչ մի միջոցի չեն դիմում սոսկալի կռիւը դադարեցնելու համար։ Փողոցներում ընկած են հայերի և թիւրքերի դիակներ։ Այլևս ոչ ոք չէ հարցնում, ո՞վ է արդարը կամ մեղաւորը։ Հայը խփում է թիւրքին, թիւրքը հային։

Երևի՝ կը զարմանաք և կը հարցնէք, թէ ի՞նչ պատահեց, ո՞ւր է համերաշխութիւնը հարեան ցեղերի մէջ, ինչո՞վ վերջացան այն բոլոր յորդորները, որոնցով դիմում էր մեր կազմակերպութիւնը բոլոր ազգութիւն-

ներին. — այդ բոլորը օդը ցնդեց և եղը մնաց միայն արիւն և կորուստ։

Այս տխուր ընդհարման պատճառը բաւական խոր է. նրան պէտք է որոնել ոստիկանական այն „խաղերի“ մէջ, որ կազմակերպւում էին Գոլիցինի և նրա արբանեակների թելադրութեամբ՝ հարևան ազգերի մէջ երկպառակութիւն սերմանելու նպատակով։ „Զուրը չպղտորուեց Գանձակում, Երևանում և Հուշում, բայց Բագուի ճահիճը սոսկալի կերպով ալէկոծուեց և երևան եկան այն սոսկալի աղէտները, որոնց ինչով վերջանալը դեռ ևս մեզ յայտնի չէ։ Այդ սոսկալի երկպառակութիւնների գլուխը անցել են վեղիրով՝ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Նահանգապետի մօտ, Նախկին պրիստաւ Մամեդբէկով՝ Միրզաբէկեանցի գործարանի դէպքերի հերոսը և Աշուրբէկ։ Դեռ մի քանի ամիս առաջ դրանք սրում էին թիւրք ամբոխը հայերի դէմ, որի հետևանքը եղաւ Միրզաբէկեանցի գործարանի կռիւը, ուր պրիստաւ Մամեդբէկով անցնելով թիւրքերի գլուխը՝ առաջինը եղաւ հրաման տուողը, որ կոտորեն հայերին։ Բարեբախտաբար կռիւը վերջացաւ մի քանի զոհերով միայն և փոթորիկը անցաւ։ Սակայն ժամանակաւոր լռութիւնը, ինչպէս երևաց, նման էր փոթորկից առաջ տեղի ունեցած խաղաղութեան. . .

Առիթ, իհարկէ, դժուար չէր գտնել։ Միրզաբէկեանի գործարանի աղէտից յետոյ, մի թիւրքի վրայ, որը շատ մեծ դեր է խաղացել այդ կռուի ժամանակ, ատրճանակ են արձակում։ Գնդակը վրիպում է և թիւրքը ազատւում։ Մամեդբէկովը այդ վերագրում է ոչ թէ միայն մի հայի, այլ հայերին, և հիմնւած այդ անտեղի ենթադրութեան վրայ, մտածում է վրէժ լուծել։ Շատ չանցած, նա յարձակւում է Միսակ անունով երիտասարդի վրայ և սպանում նրան, երբ վերջինս, առանց ոևէ կասկածի անգամ, օրը ցերեկով անցնում էր փողոցով։ Դէպքը պատահում է 1904-ի դեկտեմբերի սկիզբներին։ Այդ անպարտ սպանութիւնը սաստիկ յուզում է Միսակի ընկերներին, բայց սակայն քիչ անցած հանգստանում են և ամէն բան կարծես անցնում էր լաւ։ Մի քանի ժամանակից յետոյ, երբ սպանող թիւրքը դատաւանից բանտ վերադառնալիս փորձում է փախչել՝ սպանւում է պահապան զինուորի ձեռքով։ Զինուորը, ազգով հայ էր, և ահա այդ պատահական հանգամանքը բաւական էր շատ թիւրքերին գրգռելու։ Դրանք տարածում էին, թէ թիւրքը սպանւել է հայերի թելադրութեամբ։ Այդ անախորժ դէպքին յաջորդեցին մի քանի գաղտագողի սպանութիւններ, մօտաւորապէս 8 հոգի, բոլորը հայերից—մի փաստ, որ շատ բուռն կերպով գրգռեց հայերին։ Այդ մի կողմից. իսկ միւս կողմից Նահանգապետ Նակաշիձէն սկսում է կրակի վրայ իւղ լցնել. մի քանի անգամ կանչում է թիւրքերին, խրախուսում է նրանց և յորդորում է պատրաստւել. . .

Միաժամանակ լուրեր էին պտտում—շնորհիւ ոստիկանութեան—թէ հայերը պատրաստւում են զօրակոչի առիթով ցոյցեր անել։ Ոստիկանութիւնը լուր տարածեց, թէ այդ ցոյցերը ոչ թէ կառավարութեան դէմ են լինելու, այլ գլխաւորապէս թիւրքերի. այդ լուրի նպատակն էր կռիւ առաջ բերել երկու ազգերի մէջ և մէջտեղից վերցնել „քաղաքական“ վտանգաւոր տարրը. . .

Դեռ դէպքից մի քանի օր առաջ լսեցինք, թէ թիւրքերը պատրաստւում են ոստիկանութեան ջանքերով, բայց և այնպէս մենք աշխատում էինք դաշնակցական շրջաններում հանգստացնել մտքերը, և միւս կողմից սկսեցինք պրոպագանդ անել թիւրքերի մէջ համերաշխութիւն քարոզելով։ Եղան մի քանի ժողովներ թիւրքերի հետ միասին. մինչև իսկ փորձեր եղան թէ եկեղեցում և թէ մէջիդներում՝ քարոզներ խօսելու, բայց այդ բոլորը ոչ մի հետևանք չբերեցին. . .

Երէկ բոլորովին անսպասելի մի առիթ ներկայացաւ և լցւած բաժակը թափւեց։ Կիրակի օրը, փետրուարի 6-ին, ահագին հասարակութեան ներկայութեամբ, Պարապետի վրայ մի թիւրք մի հայ զինուորի վրայ ատրճանակ է արձակում. ոմանք ասում են, թէ դա սպանւած թիւրքի եղբայրն է, որ վճռել էր մի քանի հայ զինուորներ սպանել իր եղբօր վրէժը լուծելու համար։ Կիրակի օրը անցնելով հայոց եկեղեցու մօտով, ուր մեծ բազմութիւն էր հաւաքւած և նկատելով զինուորներին, թիւրքը ատրճանակ է արձակում նրանց կողմը և վիրաւորում մէկին ոտքից։ Դէպքը այնքան արագ է կատարւում, որ մի վայրկեան բոլորը շփոթում են և չեն կարողանում իմանալ, թէ ո՞վ էր յանցաւորը. միայն ատրճանակի ծուխը թիւրքի կողմից լինելով, ենթադրում են, որ նա է արձակողը, բռնում են և ուզում են խուզարկել՝ հաստատ համոզւելու համար, սակայն թիւրքը թոյլ չի տալիս։ Այդ պատճառով նրան նստեցնում են կառք և ուզում են տանել ոստիկանատուն։ Ամբոխը պահանջում է անպատճառ խուզարկել. կանգնեցնում են կառքը թիւրքը շարունակում է դիմադրել։ Ցանկարծ կառքից թէ կառքին շատ մօտ տեղից՝ արձակում են ատրճանակ. թիւրքը փախչում է. ամբոխը նրա յետևից։ Զայրացած ամբոխը Պարապետի միւս ծայրին հասնելով փախչողին՝ սպանում է նրան։ Ոստիկանութիւնը միշտ անուշադիր է այդպիսի դէպքերում, այս անգամ էլ բացակայում էր և հետևաբար չկարողացաւ միջամտել և կանգնեցնել ամբոխը։

Թիւրքերը այդ լսելուն պէս՝ աղմուկ են գցում, առանց երկար մտածելու իսկոյն զինւում և դուրս գալիս փողոց։ Սկսում է խաղաղ ազգաբնակութեան կոտորած. դիակները փռւած էին փողոցում մէկը միւսի յետևից մինչև ժամը 7-ը. հիւանդանոց էին տարել 19 մարդ, որոնց մի մասը սպանւած, միւսը վիրաւոր։

Ժամը 7-ին, ըստ երևոյթին, սկսւեց խաղաղւել, բայց մի ժամից յետոյ, քաղաքի զանազան մասերում, նորից սկսեց հրացանաձգութիւն և տևեց մինչև ուշ գիշեր։ Կոտորածի առաջն առնելու համար, Դաշնակցութեան կենտրոնական կոմիտէն խմբագրեց մի նամակ Նահանգապետի անունով և ուղղակի նրա պատճէնները ուղարկեցին Նահանգապետի օգնականին և ոստիկանապետին։ Նոյն գիշերը հասարակութեան ստիպմամբ՝ հայոց Անանիա եպիսկոպոսը տեսնւեց Նահանգապետի հետ և պահանջեց խիստ միջոցներ ձեռք առնել անկարգութիւնների դէմ. բայց խորամանկ Նահանգապետը հաւատացրել էր թէ „ինքը անզօր է“ և հրաւիրում է զանազան ազդեցիկ մարդկանց իրեն աջակցելու։

Որպիսի՜ անամօթ ստախօսութիւն։ Եթէ բանտարները փորձէին բարձրացնել կարմիր դրօշակ, ամբողջ փողոցները կը լցւէին զօրքերով (ի դէպ այժմ քաղաքում գտնւում է մօտ 6,000 զինւոր, որոնք բերւել են ապագայ ցոյցերը դադարեցնելու նպատակով), իսկ այժմ ոչ ոք չէ երևում թէ զինւորներից և թէ ոստիկաններից և ամէնքն էլ դարձել են „անզօր“։

Գիշերը մի կերպ անցկացրինք, որոշելով միայն մի քանի ատրճանակ ցրել ինքնապաշտպանութեան համար, խստիւ պատուիրելով նախայարձակ չլինել։ Այսօր առաւօտեան, երբ արդէն ամէն ինչ խաղաղ էր երևում, ենթադրեցինք թէ ընդհարումը արդէն վերջացաւ։ Եւ իրաւ։ Փորձեր եղան խանութները բանալու. մարդիկ դուրս եկան փողոց։ Մեր առաջին գործը եղաւ դուրս գալ և մտքերը խաղաղացնել։ Դեռ մեզ չէր յաջողել մի երկու տեղ անցնել, մինչև իսկ վերաւորների ճիչդ թիւն իմանալ, երբ լուր բերին, թէ Բալախանիից մի քանի տասնեակ թիւրքեր են եկել և արդէն խանութները նորից փակւում են մէկմէկու յետևից։ Մի ժամ անցած խանութների մեծամասնութիւնը արդէն փակած էր և ամէնքն էլ սարսափահար փախչում էին։ Թիւրքերը արդէն մօտենում էին քաղաքի կենտրոնին։ Մի քանի լոպէում քաղաքի զանազան մասերը կտրեցին միմեանցից և անց ու դարձը դարձաւ անկարելի։ Թիւրքերը իրենց ձեռքն առան Շամախինկայ, Արմեանսկի և Վարանցովսկի փողոցների մի մասը, Բազարնայա փողոցը և Պարապետի մի մասը. իսկ Սև քաղաքի կողմից Տէլէֆոնայա փողոցի մի մասը, կենտրոն է Մալականսկայա փողոցը, Մալականսկի այգու չորս կողմը մինչև Տէլէֆոնայա, Մարինսկայա, Գիմնազիսկայա և դրանց զուգահեռական փողոցները հայերի ձեռքն էին։ Ատրճանակների ձայները լսւում էին ամէն կողմից, դիակները փռւում էին մէկը միւսի ետևից, անցուդարձը դադարեց, օտարազգիները խնայւում էին երկու կողմից ևս։

Թիւրք խուժանը սկսեց յարձակւել հայերի այն խանութների վրայ, որոնք գտնւում էին Ցիցիանովի սկվերի դիմաց։ Դաշնակցական կոմիտէն նկատելով, որ խուժանը չափը անցնում է և ոստիկանութիւնը այլևս ոչ միայն չէ արգելում, այլ և խրախուսում, աջակցում է՝ որոշեց մտնել ներգործական դերի մէջ և կռւել։ Ժամը 2-ից թիւրքերը այլևս չէին համարձակւում անցնել քաղաքի որոշ թաղերով։ Սակայն հարկաւոր էր մտածել և քաղաքի միւս տեղերի մասին։ Տարաբախտաբար մեր ձեռքի տակ եղած զէնքերը այնքան քիչ էին, որ պէտք էր մտածել պահեստատեղերից ձեռք բերելու, վերցնել բոլոր եղածները և թոյլ չտալ, որ խուժանը իշնի մեր սահմանները։ Ձեռքի տակ եղած զէնքերը, փամփուշտները և զինուորները ուղարկեցինք քաղաքի միւս մասերը ամրապնդելու։ Նոյն օրը հնչակեաններից եկան մեզ մօտ և յայտնեցին, որ իրենք ունեն փամփուշտ և ատրճանակ։ Սակայն դրանք գտնւում են շատ անապահով տեղ և պէտք էր հանել։ Այդ կատարւեց, բայց աննշան էր քանակը — մօտ 275 փամփուշտ։

Մերոնք քաջաբար պաշտպանեցին բոլոր դիրքերը իրենց փոքրիկ զէնքերով։ Մի խումբ ընկերներ օրինակելի անձնուիրութեամբ, վտանգի ենթարկւելով, բերեցին և բաժանեցին զէնքերը։

(Շարունակելի)

IV

Բագու 13/26 փետրուարի

Բագուն բոլորովին փոխւել է, ինչ չէինք տեսել, տեսանք։ Դէպքից յետոյ ահագին յեղաշրջում եղաւ։ Հաշտութիւնից յետոյ, ամէն օր թէ Բագու և թէ Բալախանի տեղի են ունենում միտինգներ, 3-4,000 մարդուց բաղկացած։ Հռետորները, նախ քան խօսելը, պարզ կերպով յայտնում են, թէ իրենք ինչ կուսակցութեան են պատկանում։ Հռետորների մեծագոյն մասը թիւրքերից են։ Խօսել է „Կասպի“ լրագրի խմբագիր Թոփչիբաշեվը, նրա աշխատակից Աղաեվը և մի քանի ուրիշ ինտէլիգէնտ թիւրքեր։ Վերջիններից մէկը իմիջի այլոց հետևեալ փաստն է պատմել։ „Կոտորածի երկրորդ օրը, երբ կրակ էին տւել Լալայեանի տունը, Նահանգապետը փողոց է դուրս գալիս պրիստաւ Շախտախտինսկու հետ՝ շրջապատւած 50 կօզակներով։ Հասնում են Շամախինկայ, ուր այրւում էր Լալայեանի տունը, միջի մարդկանցով։ Թիւրքերը տեսնելով Նահանգապետին՝ զէնքերը թաքցնում են։ Նահանգապետը կանչում է նրանցից մի քանիսին և շատ քաղցր ձայնով ասում. „Մի թաքցնի, ի՞նչ սիստէմի են ձեր ատրճանակները, արդեօք շատ մարդ սպանեցի՞ք, և աւելացնում է. սպանեցէք ինչքան կարող էք, միայն տները այդպէս մի աւերէք“։ Նահանգապետը խօսում է ռուսերէն, իսկ Շախտախտինսկին թարգմանում է նրա խօսքերը թիւրքերէն. „հայերը թագաւորի դէմ են գնում. Նահանգապետը հրամայում է բնաջինջ անել հայերին՝ իրենց գոյքով“։ Իւրաքանչիւր խօսող իր ճառը վերջացնում է „կորչի՛ ոստիկանութիւնը, կորչի՛ միապետութիւնը“ խօսքերով և հազարաւոր ամբոխը կրկնում է „կորչի՛, կորչի՛“։

Չորրորդ օրը ոստիկանութիւնը փորձեց խանգարել այն ժողովը, որը նշանակւած էր ցիրկում։ Հասարակութիւնը ցիրկից վերադարձաւ կլուբը և դռները կոտրատելով ներս թափւեց։ Մի երկու ժամից յետոյ գալիս է ոստիկանապետի տեղապահը (ոստիկանապետ Դեմինսկին հեռացրւած է արդէն) և խնդրում է ցրւել, բայց հասարակութիւնը թոյլ անգամ չի տալիս նրան վերջացնել խօսքը՝ աղաղակելով „կորչի՛ ոստիկանութիւնը“։ Ոստիկանապետը ստիպւած հեռանում է։

Նոյն օրը կար և ուսանողական ժողով։ Ուսանողները տեղ չգտնելով՝ կոտրում են ամառւայ կլուբի դռները և այնտեղ հաւաքւում։ Բոլոր միջնակարգ դպրոցների աշակերտները վճռել էին դադարեցնել պարապմունքները, մինչև որ չքնիւեն արիւնհեղութեան պատճառները և չպատժւեն մեղաւորները։ Այսօր ուսուցչական ժողով կար, ծնողները հրաւիրած են խորհրդի։

Միտինգներ են լինում և միւս քաղաքներում։ Թիֆլիս, վանքի բագում հոգեհանգիստ է կատարւել 7-8,000 հոգու ներկայութեամբ։ Հոգեհանգստից յետոյ խօսողներ են եղել։

Թիֆլիսում տարածւեր է մի թռուցիկ, որով զգուշացնում են վրացիներին, իբր թէ հայերը պատրաստւում են կոտորել նրանց։ Վրացիները գլխի են ընկնում, թէ ի՞նչ աղբիւրից է այդ լուրը։ Ցայտնւում է, որ Բագուի դէպքից երկու ամիս առաջ, այնտեղ էլ թռուցիկ է տարածւել թիւրքերէն լեզուով, որի մէջ ասւած է եղեր, թէ հայերը պատրաստւում են կոտորել ձեզ, թիւրքե՛ր, պատրաստւեցէք և մտածեցէք ինքնապաշտպանութեան մասին։ Խոստովանում է այժմ ամէն մի թիւրք։

Այս քանի օրս այստեղ տարածել էին, թէ հայերն ու թիւրքերը կոտորելու են ռուսներին։ Հետևանքը այն եղաւ, որ ռուս բանւոր դասակարգից 400 հոգի, կին թէ տղամարդ, հեռանում են քաղաքից։ Քաղաքի բնակիչների 1/3-ը հեռացել է քաղաքից։ Շատ հայ խանութներ դեռ ևս փակ են։ Ամէն մի ձայն, ամէն մի աղմուկ ստիպում է մարդկանց փակւել տներումը։ Սարսափը այնքան մեծ է, որ թէպէտ այսօր ամէնքն էլ

գիտեն, որ աղէտը ոստիկանութեան գործն էր և որ չէի կարող կրկնել գանէ լայն ծաւալով, այնուամենայնիւ ամէնքը սարսափի տակ են։ Քաղաքը վինուորական դրութեան է ենթարկուած։ Առաւօտը 6-ից մինչև երեկոյեան 8 ժամը միայն կարելի է փողոց դուրս գալ։ Գիշերները իրաւունք չկայ դուրս գալու։

V

Թիֆլիս, 14 փետրուարի

Երևի արդէն ձեզ հասաւ Բագուի սոսկալի, անլսելի աղէտի լուրը։ Այս բարբարոս կառավարութիւնը կազմակերպել է հայերին ջարդելու ծրագիրը՝ թիւրք խուժանի ձեռքով և ծրագրի առաջին մասը գործադրեց Բագուում։ Հորս օր և գիշեր շրջակայ գիւղերից խուժած թիւրք ամբոխը, վինուած լաւ զէնքերով, արքունական հրացաններով և ատրճանակներով, միացած Բագուի խաւնիճաղանճ թիւրք տարրի հետ՝ կոտորում էր հայերին, անլուր անգթութիւններ գործում, կողոպտում, հրկիզում, իսկ կառավարութեան ոստիկանութիւնը, զօրքը կանգնած լոկ հանդիսատես էր, և թիւրք ամբոխին զինաթափ անելու կամ զսպելու փոխարէն, ընդհակառակը, զինաթափ էր անում հայերին։ Ամէնքը և՛ հայ, և՛ ռուս, և՛ թիւրք մեղադրում են Նահանգապետ Նակաշիձէին, որ գնացել էր Պետերբուրգ և վերադառնալով իրագործել այդ դժոխային „ծրագիրը“։

Հայերը անպատրաստ գտնուեցին, որովհետև ոչ ոքի մտքից չէր կարող անցնել այդպիսի դժոխային ծրագիր։ Անպատրաստ գտնուեցին առաջին օրերը և յեղափոխական ուժերը. այնուամենայնիւ դաշնակցական խմբերը կարողացան կոտորուող հայ ժողովրդին օգնութեան հասնել և իրենց կողմից մի լաւ դաս տալ թիւրքերին և այդ հանգամանքը ստիպեց վերջիններին հաշտութիւն անել..

Արիւնահեղ էր գործողութիւնը, որի առաջ կարծես նսեմանում են թիւրքական ջարդերը։ Ո՞վ է յանցաւորը։ Ուշադրութեամբ կարդացէք Բագուի դէպքերին վերաբերեալ կովկասեան լրագիրները և դուք կը տեսնէք, որ չնայելով ցենզուրային, հէնց այն, ինչ որ տպած է այդ թերթերում, բաւական է ամենապերճախօս կերպով ապացուցանելու կառավարութեան մեղսակցութիւնը։ Ամէնքը միաբերան ասում են. „կառավարութիւնը զինեց թիւրք ամբոխը“։

Առաջին րոպէին սոսկալի աղէտը թմրեցրեց, շշմացրեց բոլորին, ապա իմանալով, որ այդպիսի կոտորածների բանկումն աշխատում են պատրաստել և միւս քաղաքներում՝ Նուխի, Գանձակ, Շամախի, Նախիջևան, ուր թիւրք տարրը աւելի զօրեղ է, հասարակութեան բոլոր խաւերը շտապեցին ամէն միջոց ձեռք առնել և այդ վտանգի առաջն առնել։ Միջոցներ են ձեռք առնուած ամրապնդելու երկու հարևան տարրերի բարեկամութիւնը։ Արդէն Գանձակում, Երևանում և Թիֆլիսում թիւրքերը և հայերը միացած գործում են այդ ուղղութեամբ։ Միջոցներ են ձեռք առնուած նոյնպէս Պարսկաստանի հայ ժողովրդի ապահովութեան համար։

Բայց դուք մեծ գործ ունէք այդտեղ անելու։ Ցայտարարեցէք Եւրոպային ռուս „քրիստոնեայ“ կառավարութեան սոսկալի ոճիրը, գրգռեցէք հասարակաց կարծիքը, սարքեցէք միտինգներ, բողոքներ Պարիզում և ամբողջ Եւրոպայում։ Խօսեցրէք մամուլը, ցասումն թողտիրէ ամէնուրեք այս անարգ բռնութեան դէմ, որը իր ստոր նպատակներից մինն է դարձրել հայերի վերջնական ջնջումը։

Կովկասում զայրոյթը անսահման է մանաւանդ Նահանգապետ Նակաշիձէի դէմ։ Իր ոճիրը արդարացնելու համար՝ այդ յանցագործը հեռագրել է կառավարչապետի օգնական Մալամային, որ „իբր հայերը յորդորում են եղել թիւրքերին ապստամբել ռուսների դէմ և կոտորել նրանց, իսկ թիւրքերը զայրացած այդ բանից, երբև հաւատարիմ հպատակներ, իրենց վրէժն են կամեցել հանել հայերից“։ Ինչպէս տեսնում էք, զրպարտութիւնը ոչ չափ ունի, ոչ սահման։

VI

Բագու, 17 փետրուարի

Այստեղ այժմ տիրում է խաղաղութիւն, — վինուած խաղաղութիւն։ Սկսել է բանկէտների մի շարք, որ համարեայ ամէն օր տեղի է ունենում կլուբում կամ քաղաքական տան դահլիճում։ Անէծքներ է, որ թափւում են բանակալութեան և նրա ներկայացուցիչների հասցէին, այնքա՜ն բացարձակ կերպով, որ Բագուն առաջին անգամն է տեսնում։ Լսած կը լինիք արդէն, որ աշակերտական „անկարգութիւններ“ տեղի ունեցան թէ Բաթում և թէ Թիֆլիս։ Այս ամսի 15-ին էլ սկսեցաւ այստեղ։ Նշանը տուեցին բէալիստները, որոնք իրենց պարապմունքները ընդհատելով՝ գուրս են թափւում և Ալէքսանդր III գիմնազիայի պատուհանները ջարդելով՝ ստիպում են գիմնազիստներին ևս միանալ իրենց հետ։ Շուտով շարժման միանում են և օրիորդական գիմնազիաները և Ս. Նինայի դպրոցի աշակերտուհիներ. դասատուութիւնը ամէն տեղ ընդհատւում է. իսկ աշակերտական խմբերը մեծ բազմութեամբ փողոցները շրջելով „Մարսելիէզ“ են երգում։ Այժմ ուսումը ընդհատուած է այստեղի բոլոր դպրոցներում։

Փետրուարեան դէպքերից վնասուածների օգնութեան համար մի կոմիտէ է կազմակերպուած Նահանգապետի նախագահութեամբ։ Այդ բանի դէմ բողոքեցին թէ հայ և թէ թիւրք հասարակութիւնները, որոնք իշխան Նակաշիձէին միայն մահ են ցանկանում։ Որոշուած է կազմակերպել օգնութեան համար մի այլ կոմիտէ՝ բաղկացած Նահանգապետի խորհրդի, քաղաքային վարչութեան անդամների և հայ ու թիւրք հասարակութեան ազդեցիկ անդամներից և այդպիսով Նակաշիձէի կոմիտէն ֆիկցիա դարձնել։ Նաւթարդիւնագործողների խորհուրդը վնասուածների օգտին նուիրել է 100 հազար ռուբլի։

VII

Բագու, 17 փետրուարի

Մի քանի օր առաջ քաղաքային ժողովասրահում կայացաւ մի բազմամարդ ճաշկերոյթ, ուր ներկայ էին մօտ 2,000 մարդ։ Այդքան մարդկանց ներկայութեամբ, իմիջիայլ խօսողների՝ խօսեց և մի կիսաինտելիգենտ թիւրք երիտասարդ, որ հաստատեց հասարակութեան առջև հետևեալը.

„Թէ ի՞նչ գեր է խաղացել ոստիկանապետը կոտորածը առաջ բերելու գործի մէջ ընդհանրապէս և ի՞նչ է արել ինքը Նահանգապետ Նակաշիձէն, յատկապէս, երևում է և հետևեալ փաստից, որ ինքս իմ ականջովս եմ լսել։ Ամսի 7-ին Տատարսկայիա փողոցով անցնում էի, երբ տեսայ Նահանգապետին, որ կօզակներով շրջապատ-

ւած գալիս էր։ Թիւրքերի մի զինուած խումբ տեսնելով նրան՝ կանգ առաւ։ Նահանգապետը կանչեց իր մօտ թիւրքերին և պրիստաւի միջոցով յայտնեց նրանց հետևեալը. „Հայերը մեր ողորմած թագաւորի դէմ բունտ են անում և թագաւորը հրամայել է նրանց պատժել, բայց իրաւունք չեմ տալիս ձեր, խանութներ կողոպտել“, խրախուսեց ու գնաց։ Այս բոլոր խօսակցութիւնը ես իմ ականջներով լսեցի“։ Այսօր, ասացին, որ այդ թիւրքին իւրայինները բռնել սաստիկ ծեծել և մինչև իսկ մահ են սպառնացել, եթէ նա համարձակի մի այլ տեղ կրկնել։

Մեր ընկերներից մէկը այդ թիւրքից ստացել է սեփական ձեռքով գրած միևնոյն վկայութիւնը։ Նոյն թիւրքը ճաշկերոյթին բացարձակ անուանեց երկու թիւրք պրիստաւներին՝ Մէհմէտբէկով և Սուլթանով և մի „օկոլոգօշնի“՝ Շախտախտինսկի, որոնք Նահանգապետի պատուէրի համաձայն՝ ամենապարշելի դերն են խաղացել կոտորածը առաջ բերելու և ղեկավարելու մէջ։

Իշխան Ամիլախվարին, որ Նոսկաշիձէին պաշտպանելու հանումն ունի, եկաւ թէ չէ, սկսեց պատասխանատուութիւնը ձգել կոմիտէների վրայ։ Տեղական հայ հարուստների հետ խօսելիս, իմիջի այլոց, ասել է. „Մեր գիւղերում ինչ որ ես հրամայում եմ, գիւղացիները լսում են և հնազանդւում. միթէ՞ դուք հայերդ չէք կարող ձեր կոմիտէներին զսպել“։

VIII

Փետրուարի 11/24-ին, Բալախանիում, Նաւթարդիւնաբերողների խորհրդի հիւանդանոցի շինութեան մէջ կայացաւ մի բազմամարդ ժողով, բաղկացած հայ, թիւրք և ռուս ազգութեան պատկանող բանւորներից և մասամբ արդիւնաբերողներից, թւով մօտ 1,000 հոգի։ Ընդունուեց հետևալ որոշումը.

„Ժողովը քննելով վերջին օրերս Բագու քաղաքում տեղի ունեցած դէպքերը, եկաւ հետևեալ եզրակացութիւններին.

„1) Բագուի թիւրք և հայ ազգաբնակութեան մէջ ոչ մի լուրջ ազգայնական թշնամութիւն չկայ, ապացոյց՝ նրանց երկարատև խաղաղ կենակցութիւնը։

„2) Հայերի և թիւրքերի երեք օր շարունակուող փոխադարձ վայրենի կոտորածը ամբողջապէս առաջ է եկել ոստիկանութեան և կառավարութեան այլ պաշտօնեաների ձեռքով թիւրք խուժանը հայերի դէմ գրգռելուց։

„3) Ռուսաց միապետութիւնը, յանձին իր տեղական ներկայացուցիչների, փորձում է յարատևել իր գոյութիւնը ազգային թշնամութիւն և ատելութիւն սերմանելով։ Զանազան ազգութիւնները միմանց դէմ կանգնեցնելով, կառավարութիւնը ձգտում է՝ մի կողմից ամբողջ ազգաբնակութեան ուշադրութիւնը շեղել ժողովրդի իսկական թշնամուց—կառավարութիւնից,—միւս կողմից յոյս ունի այդպիսով յեղափոխական կազմակերպութիւնները թուլացնել։

„4) Վերջապէս Բագու գտնուող բոլոր ազնիւ մարդկանց պարտքն է՝ առանց ազգայնական խտրութեան պարզել բոլորին և ամենուրեք տեղի ունեցած դէպքերի իսկական պատճառը, որպէս զի կառավարութեան այդ վերջին ճիգն էլ՝ ազգային թշնամութեան վրայ յենուելը, այդ նոյն կառավարութեան դէմ դառնայ և այդպիսով իրականանայ Ռուսաստանի բոլոր ազնիւ քաղաքացիների նուիրական ցանկութիւնը—միապետութեան ոչնչացումը“։

ԲԱԳԻԻ ԹԻՒՐՔԵՐԻՆ *)

Մեր քաղաքը արիւնալի, ամօթաբեր գործողութիւնների ասպարէզ էր դարձել։

Զորս օր ականատես և ականջալուր մեղսակից էինք անմիտ, զզուելի եղբայրասպանութեան։

Թափուեց շատ անմեղ արիւն, ընկան բազմաթիւ մարդկային զոհեր։

Հարևանը զինուեց հարևանի դէմ և սկսուեց կոտորած՝ վայրենի, անփառունակ և ամօթաբեր։

Թէ ո՞ւմ վրայ է ընկնում այդ սարսափելի օրերի պատասխանատուութիւնը,—մենք դեռ յետոյ կը վերադառնանք դրան։

Այժմ անկեղծ սրտով ողջունում ենք վերականգնուած խաղաղութիւնը և ցանկանում ենք, որ դա լինի ամուր և ընդմիշտ, որովհետև գիտենք և լաւ յիշում ենք, որ ոչինչ բաժանելիք չունենք թիւրքերի հետ։ Մենք չունենք միմեանց հակասող շահեր, եթէ մենք զէնքի դիմեցինք այդ միմիայն նրա համար, որ ստիպուած էինք պաշտպանել մեր պատիւը, մեր կեանքն ու մեր կայքը։

Բայց հէնց որ հնչեց խաղաղութեան հրաւէրի առաջին կոչը, մենք թեթևացած սրտով ցած դրեցինք հարևանների արիւնով ներկուած մեր զէնքերը։

Այդ արիւնին մենք ծարաւի չէինք և չենք էլ ծարաւել երբէք։ Մեծ զզւանքով ենք յիշում դեռ նոր անցած օրերը և գործ կը դնենք մեր բոլոր ուժերը, որ նրանք այլևս չկրկնեն։

Հէնց նոյն այդ հաշտութեանն ենք հրաւիրում ձեզ, մահմէտականներ, մի՛ փնտռէք թշնամուն այնտեղ, ուր նա չկայ և մի՛ գործածէք ձեր զէնքերը այնպիսի մի գործում, որը կը ծածկէ ձեզ ոչ թէ փառքով, այլ ամօթով։

Հ. Յ. Դ.

ԲԱԳԻԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

14 փետր. 1905

ԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՈՐ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Քաղաքացիներ,

Ինքնակալ կառավարութիւնը դարերով ճնշում և կողոպտում է ժողովրդին։ Նրա բռնութիւնը հասաւ ծայրայեղութեան և ժողովրդի համբերութիւնը հատաւ։ Այն անհաւասար կռիւը, որ դժգոհների մի խումբ վաղուց սկսել էր մղել թագաւորի ինքնակալութեան դէմ, նետգհետէ արծարծուեց և գրաւեց ժողովրդի աւելի և աւելի լայն խաւերը և վերջապէս փոխուեց մի հզօր յեղափոխական հեղեղի, որ պէտք է քշէ ու ջնջէ երկրի երեսից ցարի գահը։

Ինքնակալութիւնը ճնշում և խեղդում է բոլորին։ Եւ բոլորը ոտքի ելան նրա դէմ, ժողովրդի բոլոր խաւերը և բոլոր ազգութիւնները, որոնք ապրում են լայնածաւալ Ռուսաստանում։

Ցարի ինքնակալութիւնը սերմանում էր խառնակութիւն և այժմ հնձում է իր սերմանածի պտուղը—ժողովրդի ատելութիւնը։ Կառավարութիւնը իր բոլոր հպատակներին, ամբողջ ժողովուրդը, դարձրեց իր կատաղի թշնամին։ Բոլորը դժգոհ են նրանից, բոլորը հակառակ են նրան, և նա ինքը հակառակ է բոլորին։ Երերուեց թագաւորի ինքնակալութիւնը։ Նա զգաց ժողովրդի հզօր հոսանքը, և նրա

*) Այս նամակը տպագրուեց եւ տարածուեց նոյնպէս եւ ռուսերէն լեզուով։

առաջ կանգնեց ժողովրդական վրէժխնդրութեան ահեղ պատկերը—յեղափոխութիւնը։

Որպէս զի իր սեփական գոյութիւնը պաշտպանէ, որպէս զի ժողովրդի աչքում բարձրացնէ իր կոտրած վարկը՝ կառավարութիւնը ձեռնարկեց անիծապատակ պատերազմի Եապոնիայի հետ, մի պատերազմ, որ ոչ ոքին հարկաւոր չէր, բայց միայն կառավարութեանը։ Սակայն մի շարք պարտութիւններ ցամաքի և ծովի վրայ՝ բաց արին ցարի ռէժիմի ամբողջ ապականութիւնը, այնպէս որ կառավարութեան այս գէնքն էլ իր դէմ ուղղուեց։ Ուրեմն նրա այս հնարագործութիւնն էլ չաջողուեց, և հարկ եղաւ դիմել ուրիշ՝ յաճախ արդէն փորձած միջոցի՝ կործանող գահը փրկելու համար—այն է ազգաբնակութեան մի մասը միւսի դէմ գրգռելու, որպէս զի այս միջոցով յետ մղէ այն հարուածը, որ ուղղուած է ինքնակալութեան դէմ։

Նա կազմակերպեց խուժանների խմբեր, որպէս զի որսան ու կոտորեն ազատութեան համար կռուողներին. նա կազմակերպեց հրէական ջարդեր, ինչպէս Կիշինեվում, Գոմէլում և ուրիշ քաղաքներում, և այժմ էլ գիտենալով որ Կովկասում ապրում են բազմատեսակ ազգութիւններ, այստեղ էլ նոյն միջոցին է դիմում։

Այս նպատակով է ահա, որ թագաւորի զազան պաշտօնեաները կազմակերպեցին Բագուի կոտորածը։ Օգտուելով մահմէտական ազգաբնակութեան տգիտութիւնից և կուրութիւնից և նրան նախապէս զինելով՝ այդ պաշտօնեաները նրան բաց թողեցին անպաշտպան և ահզէն հայերի վրայ։ Նրանք խոստացան թուրքերին, որ բոլորովին անպատիժ կը մնան, և ահա Բագուում տեղի ունեցաւ մի զարհուրելի հեղեղագործութիւն, որի համեմատութեամբ Կիշինեվի սարսափները ոչինչ են։ Հինգ օր է արիւն է հոսում։ Հառաչանք ու ողբ լցրել են քաղաքը։ Մահմէտական խաւար ժողովուրդը, ոստիկանութիւնից քաջալերութիւն գտնելով, այնպիսի գազանութիւններ է գործում, որոնք զերազանցում են նոյնիսկ թիւրքական գազանութիւններից։

Հապա ոստիկանութի՞ւնը, հապա զօ՞րքը։ Նրանք չեն երևում։ Նրանք անում են այն՝ ինչ հրամայած է—չխանգարել մահմէտականներին և խլել զէնքը՝ պաշտպանուող հայերի ձեռքից։ Երբ հայերը դիմում են զօրքի օգնութեանը՝ սրանք պատասխանում են. «Մեզ չէ հրամայած միջամտել»։ Նահանգապետը յայտարարում է, թէ զօրք չունի կոտորածը դադարեցնելու համար։

Անամո՞թ սուտ։ Երբ բանտարներն են դուրս գալիս ցոյց անելու, այն ժամանակ զօրք լինո՞ւմ է։ Այն ժամանակ նրանք ամբողջ քաղաքը մի բոպէում զինուորական բանակի են վերածում, իսկ ա՞յժմ — այդ նրանց ձեռնտու չէ։

Ք ա ղ ա ք ա ց ի ն ե՞ ր. Այս բոլորը մեռնող ռէժիմի վերջին ջղաձգութիւններն են։ Ինքնակալութիւնը զգում է, որ իր օրերը համրած են, և դիմում է վերջին միջոցին։ Այսօր նա մահմէտականներին է զինում հայերի դէմ, վաղը վրացիներին կը զինէ հայերի կամ մահմէտականների դէմ, և այսպէս շարունակ։ Մենք չունենք ապահովութիւն վաղուայ օրուայ համար։ Ինքնակալութիւնը ամէն միջոցի կը դիմէ, որպէս զի կարողանայ իր խղճուկ գոյութիւնը պահպանել։ Վաղը այստեղ էլ կարող են կրկնուել Բագուի կոտորածի սարսափները։

Դէ՛հ, ուրեմն, քաղաքացիներ, ոտքի կանգնենք մենք ինքներս՝ մեր իրաւունքները, մեր կեանքը պաշտպանելու։

Եթէ ոստիկանութիւնը փորձ անէ այսպիսի գազանութիւններ կազմակերպել և ուրիշ տեղերում՝—մենք այդ թոյլ չենք տալ։ Մենք առաջ կը գանք։ Բայց առաջ կը գանք միաւորուած այժերով մեր ընդհանուր թշնամու դէմ, այս կոտորածների գլխաւոր պատճառի—ինքնակալութեան դէմ։ Մենք թոյլ չենք տալ. որ կառավարութիւնը յափշտակիչների մի խմբի հետ կոտորէ և կողոպտէ խաղաղ քաղաքացիներին։ Մենք մեր բոլոր այժերը կ'ուղղենք ոստիկանութեան, ժանդարմների դէմ, զզուելի թագաւորի այդ զզուելի ստրուկների դէմ։

Թող բոլորիս նշանաբանը լինի՝ բոլորը մէկի համար և մէկը բոլորի համար։

Կորչի՛ ցարի ինքնակալութիւնը։

Կեցցէ՛ ազգերի համերաշխութիւնը։

Կեցցէ՛ ապագայ յեղափոխութիւնը։

ՌՈՒՍ. ՍՕՑ.-ԴԵՄՈԿՐԱՏ. ԲԱՆԻՈՐ. ԿՈՒՍԱԿ. ԿՈՎԿԱՍԵՍԱՆ ՄԻԱՑԵԼԻ ԿՈՄԻՏԷ

ՀՆՉԱԿՆԵՐՆ ՍՕՑ.-ԴԵՄՈԿՐԱՏԱԿ. ԿՈՒՍԱԿ. ԹԻՖԼԻՍԻ ԿՈՄԻՏԷ

«ՍԱՖԱՐԹՎԵԼՕ» ՍՕՑԻԱԼ-ՖԵԴԵՐԱԼԻՍՏ. ԹԻՖԼԻՍԻ ԿՈՄԻՏԷ

ՍՕՑ.-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ.-ԹԻՖԼԻՍԻ ԿՈՄԻՏԷ

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵՍԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿՈՄԻՏԷ

12 փետրուարի 1905 թ.
Թիֆլիս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Ս. Պետերբուրգ, 24 փետրուարի

Սոսկումի օրերին յաջորդեցին քաղաքական „մխիթարութեան“ օրեր։ Եւ մեր անպատում դառնութեան մէջ՝ հայ-թիւրքական արեան դեռ թարմ հետքերի վրայ՝ միակ սփոփանքն ու յուսատու ճառագայթը—դա հ ա մ ե ր ա շ խ ո ւ թ ե ա ն կոչն է, որ ինչպէս հողմ պտոյտներ է գործում Անդրկովկասեան քաղաքների վրայ, այն բոլոր վայրերում, ուր դարերի հարևանները կարող էին միմեանց դէմ ծառանալ, Բագուի նմանութեամբ—սուրն ու ատրճանակը ձեռքին, արեան ծարաւը սրտի մէջ։

Կեցցէ՛ յաւիտեան գաղափարը։

Նա դարձեալ մի անգամ յաղթանակեց դարձեալ մի անգամ փշրեց բռնապետական գործակալների ծրագիրը և յետ մղելով խուժանի մահաբեր բնազդները, հպարտօրէն պարզեց հ ա մ ե ր ա շ խ ո ւ թ ե ա ն դրօշը՝ ատելութեան և թշնամանքի վայրերում։

Այդ գաղափարը յամառութեամբ քարոզուեց, անթիւ յօդուածներ և գրքեր նուիրուեցին նրան, շատ գլուխներ նրա տարածման տենչով վառուեցին—սակայն նա մնաց սահմանափակ, դուրս ժողովրդական մեծամասնութեան գիտակցութիւնից։ Ամբոխը չլսեց այդ կոչը։ Եւ ահա մի տխուր առաւօտ, երբ անարգ ոստիկանութիւնը ա չ ք ո վ ա ր ե ց, գազանացած՝ մարդը դուրս նետուեց իր խաղաղ անկիւնից, և ստորագոյն գաւագրութեամբ յարձակուեց իր նմանի վրայ, պատրաստ պատառ պատառ անելու այն բոլորը, ինչ որ այլ կրօն, այլ ծագում, այլ հակումն ունի...

Սակայն դա դեռ սկիզբն էր։ Արիւնը հոսեց միայն մի քաղաքում — Բագու։ Գազանութեան հուրը, բորբոքուած ոճրագործների ձեռքով, տրամադիր չէր ամփոփուել միայն

մի քաղաքում և մի գաւառում։ Փրփրած կատաղութեամբ՝ նա ուզում էր առաջանալ, տարածուել, արիւն և արտասուք սփռել ամենուրեք, նոյնիսկ այն վայրերում, ուր մոլեռանդութիւն չկար, բայց կար և պիտի լինէր վրէժը, հատուցման անհաճոյ, բայց սանձահարող զէնքը։

Եւ այդ ահաւոր բոպէին՝ ահա՝ հնչեց համերաշխութեան կոչը—զօրաւոր և հրապուրիչ, կենդանարար ու խրախուսող։ Նա օդի մէջ չմնաց։ Նրա ալիքները ուժգին շարժմամբ հասան բոլորի ականջին, — փողոցներում ու հրապարակների վրայ, եկեղեցում, մզկիթների մէջ հնչեցին գեղեցիկ, յուզիչ խօսքեր, ընդունակ թափանցելու ամբոխային խաւերը, կարող՝ հոգի ու սիրտ տալու նոյնիսկ ծայրայեղ յոռետեսներին։

Եւ որպիսի՜ գեղեցիկ տեսարաններ։

Քրիստոնէական եկեղեցում, ուր երբեմն մահմէտական ատելութեան նշանակէտն էր, և մզկիթներում, ուր շատ քիչ էր ոտք կոխում հաւատացող-քրիստոնեան, կողք կողքի կանգնեցին անցեալի թշնամիները։ Ամբիոնի վրայ՝ եղբայրական սիրով՝ երևան եկան քահանան և մոլլան — երկու ուժերը արևելեան կրօնամոլութեան — և նրանց բերանից հնչեցին եղբայրութեան խօսքեր, բուռն հրաւէր դէպի համերաշխ կենակցութիւն։ Թիֆլիս՝ հայոց մայր տաճարում, Գանձակ՝ մահմէտական մզկիթի մէջ և այլ քաղաքներում՝ թէ մէկ և թէ միւս սրբավայրերում՝ ներկայ եղողները, թիւրք և հայ, հոգեհանգստեան աղօթքներ մրմնջացին զոհերի յիշատակին, աղօթքի մէջ միացրին նրանց, որոնք երէկ ոչ միայն բաժանուած և անջատ էին, այլև թշնամի և անհաշտ ոսոխ։ „Մենք միևնոյն երկրի զաւակներն ենք, ապրում ենք նոյն հողի վրայ, խմում ենք նոյն ջուրը,—ասաց շէյխ-իլ-իսլամը իր ճառի մէջ—և թող անէծքի ու կրակի բաժին դառնայ այն չարամիտ սատանան, որ կուռեցրեց դարերի հարևաններին, երէկուայ հաշտ ծանօթներին։ Թող անիծուի նա“... Մի այլ մզկիթում, դարձեալ նոյն զգացմունքներով վառուած, թիւրք-զինուորականը այս խօսքերով վերջացրեց իր ճառը. „Հայե՛ր, ռուսնե՛ր, վրացինե՛ր։ Ներեցէ՛ք, մոռացութեան տուէ՛ք Բագուի չարագործութիւնները, որ մեր այնտեղի եղբայրները գործեցին անգիտակցաբար, կոյր գործիք դարձած նենգամիտ մարդոց ձեռքում։ Մենք այդ մեղքը պիտի քաւենք՝ անխարդախ բարեկամութեամբ։ Մոռացութեան տուէ՛ք եղածը, ներեցէ՛ք մեզ“... Ու ներկայ եղողները սարսափահար՝ թափուած արիւնից և սիրտ առած վաղուան հաշտութեամբ, արտասուք էին թափում ու գրկախառնուում...

Այդ սրտապնդող տեսարանների դիմաց՝ եթէ կայ մի սև-մարմին, որ դժգոհ է, թէև լռելեայն, զայրացած, թէև գաղտնի կերպով—դա կառավարութիւնն է, „բաժանիր, որ տիրես“-ի հեղինակը։ Ապշերօնեան թերակղզու վրայ կոտորածներ ստեղծագործող հոգիները, անշուշտ, յուսախաբուած են և նոյնիսկ յուսահատած, որովհետև ժողովրդական ըմբոստացած ձայնը՝ անդադար „Պատիժ, պատիժ“ է գոչում, և արդէն օդի մէջ գծագրուում է տէռորիստական դաշոյնը...

Զը խրատուած մի փորձից, ցարիզմի գործակալները երկրորդում են իրենց „քաղաքական փորձերը“ այլ տեղ, այլ շրջաններում։ Բագուի դէպքերից հազիւ մի շաբաթ անցած, Թիֆլիսում աղմկայոյզ լուրեր պտտեցին — „վրացիները պատրաստուում են հայերի վրայ յարձակուել“։ Այդ էր բովանդակութիւնը նորագոյն լուրի, դուրս եկած անկապակցած ոստիկանութեան ղեկավարների առանձնասենեակներից։ Լուրը այնքան տարածում գտաւ, որ վրաց ուսանող-երիտասարդութիւնը, քաղաքական տակտի հրամայական պահանջ համարեց՝ յայտարարել, որ այդ ամէնը չարամտութեան ստեղծագործութիւն է, քանի որ վրաց հասարակութիւնը այնքա՜ն խոցուած միապետութեան հարուածներից, քաղաքական տհասութեան ապացոյց կլինայ, եթէ թշնամին որոնէր ոչ թէ կառավարութեան բանակում, այլ հարևան ժողովրդի մէջ, նոյնքան և գուցէ աւելի դժբախտ, ինչքան ինքը...

Հայ-վրացական համերաշխութեան ցոյցերը չսահմանափակուեցին այդ յայտարարութեամբ։ Երկու ժողովրդների մատաղ սերունդները միացած՝ հոգեհանգիստներ կազմեցին Բագուի զոհերի յիշատակին, ժողովներ գումարեցին, ուր արտասանուեցին շաղկապող ճառեր և հաշտութեան արձագանքները թափանցեցին մամուլի մէջ, ժողովրդի բոլոր խաւերը։ Դա, իհարկէ, նախերգանքն է միայն։ Դեռ շատ խօսքեր են պէտք, խօսքեր՝ անկեղծ ու սրտաբուղխ, դեռ շատ ձեռնարկներ են հարկաւոր, համերաշխութեան ձեռնարկներ, որպէս զի կառավարչական պառակտող շունչը անկարող լինի թափանցել և թունաւորել հաշտութեան սրբազան գործը...

Ս. Պետերբուրգ, 1 մարտի

Կոմս Վ.օրոնցով-Դաշկով կովկասեան կառավարչապետ Նշանակելու լուրը, որ երկու շաբաթից ի վեր պտտում էր, հաստատուեց, և նա արդէն պատրաստուում է ճամբայ ընկնելու դէպի Թիֆլիս։

Առիթ կար կարծելու, որ իշխան Գոլիցինի անմիտ քաղաքագործութիւններից յետոյ, որոնք ընդհանուր գըրգռումն տարածեցին երկրի բոլոր կողմերում, նշանակէր մի այնպիսի անձ, որ կարող լինէր թէ իր անունով, թէ անցեալով և թէ ուղղութեամբ փոքր ինչ խաղաղացում մտցնել մտքերի մէջ։ Այդպէս եղաւ, օրինակ, 1891 թ.ին, երբ Դոնդուկով-Կորսակովից յետոյ, կառավարչապետի պաշտօնին կանչուեց Շերեմետեվ, անցեալը մոռացնել տալու և դժգոհութիւնը մեղմացնելու նպատակով։ Ներկայ օրերին այդ „զգուշութիւնը“ աւելի քան տեղին կը լինէր, քանի որ քաղաքական յոյզերը փոթորկել են ամբողջ Կովկասը...

Զերմ խնկարկու Ալէքսանդր III-ի, մտերիմ մայր-թագուհու, անդամ ամենազօր ու յետադէմ „սակաւապետութեան“, որ վարում է բոլոր գործերը դժբախտ Ռուսաստանում, Վ.օրոնցով-Դաշկով ցանկութիւն և հրահանգ ունի անշուշտ՝ շարունակելու ռուսացման քաղաքականութիւնը և „կարգ հաստատելու“ ինչպէս և ինչ միջոցներով էլ լինի։ Ճնշման և հալածանքի քաղաքականութիւն, որ չի հանգստացնի, չի լռեցնի, այլ, ընդհակառակը, նոր ուժ կը տայ քաղաքական ըմբոստութեան, որով բռընկուած է ամբողջ Անդրկովկասը։

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՇԻՆԵՒԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Բագուի կոտորածի առթիւ՝ մեր խմբագրութիւնը գրաւոր դիմում արեց 1) Բրիւսէլի Միջազգային սոցիալիստական Բիւրոյին, 2) Պարիզի Մարդկային Իրաւունքների Դաշնակցութեան, 3) Ռուս ժողովրդի և միացրած ապ-

գերի բարեկամների Դաշնակցութեան, Պարիզ,—խնդրելով նրանց հրապարակել ռուս կառավարութեան նոր բագոյն ոճիրները, կատարած Կովկասում։

Բրիւսէլի Միջազգային Սոցիալիստ. Բիւրոն անմիջապէս հետևեալ կոչն ուղղեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի սոցիալիստ կուսակցութիւններին ու նրանց օրգաններին.

Սիրելի ընկերներ,

„Մենք նոր առացանք „Հայ Յեղափոխական Դաշնակցութեան“ օրգան՝ Ժընէվում հրատարակուող „Դրօշակ“ի խմբագրութիւնից մարտի 10 թուակիր մի նամակ, որ վերաբերում է Բագուի վերջին կոտորածներին։

„Չեղ. անյայտ չէ, որ ռուսական ճնշումները դրել են Կովկասը մշանջենական ապատամբութեան վիճակում։ Անկարող լինելով պատնէշ դնել ապատագրական շարժման առջև, որին մասնակից են այդ երկրի բոլոր ազգաբնակութիւնները, ցարի կառավարութիւնը կոչ է արել ֆանատիկոսութեանը և գրգռել է իրարու դէմ զանազան ազգութիւններին։

„Հրէաներին ջարդել տալուց յետոյ, Նիկոլայ Երկրորդի խորհրդականները վերսկսում են հայերի դէմ Աբդիւլ Համիդի արիւնոտ քաղաքականութիւնը, որ Միջազգային Սոցիալիստական Բիւրոն մատնել է քաղաքակրթած աշխարհի ցասումին 1901 թուի հոկտեմբերի 18-ին։

„Գործադիր կոմիտէն կարծում է, որ ինքը թարգման կը լինի բոլոր սոցիալիստների, վերսին բարձրելով այն նախատածած ջարդերի դէմ, որոնց զոհ է հանդիսանում դժբախտ հայ ժողովուրդը։ Մենք համոզած ենք, որ դուք կը միանաք մեր բողոքին, առնելով այն բոլոր նախաձեռնութիւնները, որոնք բղխում են 1900-ի Պարիզի Միջազգային Սոցիալիստական Կոնգրէսի որոշումից“։

Ընդայրական ողջոյններով

Գործադիր կոմիտէի կողմից՝

Քարտուղար ԿԱՄԻԼ ՀԻՒՍՄԱՆ

Այս հրաւէրին կցած է „Դրօշակ“ի խմբագրութեան բացատրական նամակը, ուր մերկացրած են ռուս կառավարութեան գարշելի դաւերը։

Սոցիալիստական մամուլը սիրով հիւրընկալեց Բիւրոյի կոչը և մեր նամակը։

*

Մարտի 20-ին Պարիզում տեղի ունեցաւ Անատոլ Ֆրանսի նախագահութեամբ բազմամարդ միտինգ կազմակերպած „Ռուսաստանի ժողովուրդների բարեկամների Դաշնակցութեան“ կողմից. Բագուի աղէտը մեծ տեղ բռնեց ատենախօսութիւնների մէջ և „Դրօշակ“ի վերը յիշած նամակը կարդացուեց ամբիոնից։

*

„Արդիական Իրաւունքների Դաշնակցութեան“ որոշման մասին ահա թէ ինչ ենք կարդում Պարիզի թերթերում.

„Մ. Ի. Դաշն. կենտրոնական կոմիտէն, ծանօթանալով իրեն ուղղուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան նամակի հետ,

„Հաստատելով, որ Բագուի մէջ առաջ բերելով հայերի կոտորած թիւրքերի ձեռքով՝ ցարը դարձաւ նման ու հաւասար Կարմիր Սուլթանին,

„Նկատելով, որ Կովկասում կիրառուած մեթոդը բնաւ չէ տարբերւում այն մեթոդից, որ կիրառւում է Լեհաստանում, Ֆինլանդիայում, կ շնեևում ու Նոյնիսկ Պետերբուրգում,

„Նորոգում է իր պարտականքի արտայայտութիւնը մի քաղաքակիրթ կառավարութեան այդ անարժան ընթացքի դէմ“։

*

Եւրոպական մամուլի կարևոր օրգաններին մեր խմբագրութեան կողմից ուղղուած է հետևեալ տպուած շրջաբերականը.

Պարոն,

„Ձեր վեհանձն աջակցութիւնն ենք ինդրում՝ քաղաքակրթութեանը մատնելու համար այն հակամարդկային ոճիրները, որ գործուած են հայ ժողովրդի դէմ, այս անգամ Կովկասում, քրիստոնեայ Նիկոլայ Երկրորդի կայսրութեան մէջ։

„Բուական չլինելով, որ սառար եղաւ 1895-96-ի մեծ կոտորածներին թիւրքայ Հայաստանում, ցարիզմը ձգտում է, իր սեփական կայսրութեան մէջ, ջնջնել, սընչացնել հայ տարրը, որ նա համարում է ամենամատնչաւորը իր քաղաքականութեան և իր տիրապետութեան համար Կովկասում։

„Մի Երկրորդ Կիշինև կազմակերպեց նորերս մեծ արդիւնաբերական Բագու քաղաքում, աւելի սարսափեցնող չափերով և չլուսած, յանդուգն անամօթութեամբ։

„Այդ վայրում, ուր քիչ առաջ հաղարաւոր գործաթող բանուորներ, բոլոր ազգութիւնների պատկանող, եղբայրացում էին մի հոյակապ ցոյցի մէջ, կազմակերպուած ընդդէմ կապիտալիզմի ու բռնապետութեան—բիւրօկրատիայի դաւերը աջողեցին իրարու վրայ նետել երկու դարաւոր, խաղաղ հարևանների՝ մահմէտական և հայ ժողովուրդներին. հետևեց մի ահռելի ապանդանոց, որ տևեց մի քանի օր։ 7-800 մարդ կրան այդ արիւնահեղ ընդհարումների միջոցին և վիրաւորների թիւը հասաւ 1,500-ի։ Հայոց թաղերը ապերեցին, տները հրդեհեցին, ամբողջ ընտանիքներ կենդանի այրեցին։

„Եւ իշխանութիւնները ապա՞ ձգեցին մարդասպաններին։ Նահանգապետը և կօզակների ջոկատները անտարբեր դիտում էին բարբարոսութեան տեսարանները։ Սակայն նրանք բոլորովին անգործ չէին. ատիկաններն ու կօզակները հրաման էին ստացել աջակցել մահմէտականներին, կազմակերպել բախտախնդիրների խմբեր, որոնց նրանք զէնք էին բաժանում, իսկ ղեկավարներ էին տալիս հայերին։

„Հաղարաւոր հայ բանուորներ մեռակայ Բաքախանի գործարանից առաջ նետուեցին դէպի քաղաքի կենտրոնը՝ իրենց հայրենակիցներին օգնութեան հասնելու։ Բայց Բագու մտնելիս՝ կօզակները կանգնեցրին նրանց և զինաթափ արին, և այդ այն ժամանակ, երբ թիւրք ֆանատիկոսների անթիւ խմբեր ազատ շրջում էին բոլոր ուղղութիւններով ու սպանում, թալանում, հրդեհում։

„Միմիայն մի քանի հարիւր հոգի „Դաշնակցութեան“ զինուորներից կարողացան զինուած ներս թափանցել և բռնել հայ թաղերի գլխաւոր փողոցները, ուսկից նրանք, չնայած կօզակների դիմադրութեան, դուրս քշեցին մահմէտականներին, որոնք յարձակուում էին միայն անզէն ժողովրդի վրայ։

„Հայ յեղափոխական կոմիտէն կատարեց իր բոլոր պարտականութիւնը։ Երբ նահանգապետ Նակաշիձէին ուղղած նրա պահանջը—կանգնեցնել արիւնհեղութիւնը—ապարդիւն անցաւ, նա ձեռք առաւ բոլոր անհրաժեշտ միջոցները, աղեարտահմանափակելու համար։

„Լաւ իմանալով, որ դաւադրութիւնը նիթուած էր ռուս կառավարութեան կողմից և որ մահմէտական կառաջնորդութեան բռնկումը կազանցուկ մի երևոյթ է, Հայկական Կոմիտէն, հաւատարիմ իր հաշտարարութեան աւանդութիւններին, չուզեց իր կողմից դրդուող հանդիսանալ մահմէտականների դիմաց, նա չուզեց անգամ ի գործ դնել այն ծայրայեղ միջոցները, որ նա ունէր իր տրամադրութեան տակ։

„Նմանապէս պակաս չեղան և մահմէտականների մէջ բարի ու հեռատես անձեր, որոնք սարսափի բոպէին ապատան տուին տարեկեած հայերին։ Նրանք լաւ գիտէին այդ դարշանքների ճշմարիտ պատճառները...

Պարոն,

„Դուք գանուում էք հրեշաւոր իրողութիւնների հանդէպ, որոնք ծանր են մնալու այն պատճառով, որ, ցարիզմի քաղաքականութեան շնորհիւ, նրանք սպառնում են կրկնուել Անդրկովկասի ուրիշ քաղաքներում՝ Երևան, Շուշի, Գանձակ և ամէն տեղ, ուր կայ հայ-մահմէտական խառն ազգաբնակութիւն։ Յեղական կամ կրօնական ատելութիւնը բոլորովին օտար է այդ ընդհարումներին։

„Այսօր Կովկասի բոլոր ազգութիւնները, հայ, ռուս, վրացի ու մահմէտական, միաբերան վկայում են, որ այդ եղբայրասպան կռիւների կազմակերպողն է ինքը ռուս կառավարութիւնը, որը գլուխը կորցրած Յեղափոխութեան ուրուականի առաջ ձգտում է ընդհարումներ յարուցանել այլազան

տարրերի միջև, ջլատելու համար Կովկասի ազատագրական թռիչքները։

„Մենք ձեզ խնդրում ենք, յանուն հազարաւոր զոհերի, հրապարակ հանել իրողութիւնները և մի անգամ ևս նշուակել այն ամբարտաւան բռնապետութիւնը, որ իր բովանդակ տարածութեան վրայ սերմանում է միայն ատելութիւն և արիւն“։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԳԱՆ

*

Բարեբախտաբար, եւրոպական մամուլը, անցեալի փորձից հրահանգուած, չյապաղեց մասնացոյց անելու կատաստրոֆի իսկական հեղինակի վրայ, չնայած ռուսական պաշտօնական աղբիւրներից տարածուող ստերին ու ինսինուացիաներին, որոնք ուղղուած էին հայ յեղափոխական կոմիտէների դէմ, իբրև աղէտի պատասխանատուների։

*

Frankfurter Zeitung-ը, մեր առաջին հեռագիրներից աղդարարուած, հենրեց պաշտօնական, ստայօդ լուրերը, արդարացրեց հայ յեղափոխականներին, ձգելով դէպքերի ամբողջ պատասխանատուութիւնը ցարի կառավարութեան վրայ։ „Հայ յեղափոխականները, ասում է այդ թերթը, բնաւ հիմք չունեն թշնամական դիրք բռնելու մահմէտականների նկատմամբ“։

Մանրամասն թղթակցութիւններ լոյս տեսան Բագուի ընդհարումների մասին, բոլոր երկրների մամուլի մէջ։

Frankfurter Zeitung-ի սեփական թղթակիցը յուզիչ տողերով նկարագրելով հայերի ջարդը, գրում է ի միջի այլոց հետևեալը.

„Մի ստիկան իմ հարցումին, թէ ինչու չէ օգնում հայերին, պատասխանում է. „օ՜, ոչինչ եթէ մի քանի հայեր սպանուին, դա լաւ է նրանց համար, դա մի տեսակ արիւնառութիւն է (Aderlass), այն ժամանակ նրանք քիչ կը մտածեն յեղափոխութեան մասին“. . . . . .

„Վերջապէս Բալախանիից վրայ հասան հայ բանուորները քաջարի Նիկոլի առաջնորդութեամբ՝ իրենց ներն ընկած եղբայրներին օգնելու համար։ Դրանք յետ քշեցին մարդասպաններին... Քաղաքի կենտրոնում պաշարուած ու այրուած Ադամեանի ու Թաթոսեանի ընտանիքները ևս կազատուէին, եթէ ոստիկանութիւնը չ՚արգիլեր հայ բանուորութեանը սովորական ճանապարհով Բալախանիից անցնել Բագու։ Նրանք ստիպուած եղան մի քանի ժամւայ պտոյտ անել ուրբով։ Այնուամենայնիւ ազատարարները եկան լաւ ժամանակին և դէթ կարողացան շատ ուրիշ ընտանիքների կեանքը ազատել“։

Տարօրինակ է դէպքերի նկարագրութիւնը գերմանական Սոցիալ-դէմօկրատիայի օրգան՝ Vorwärts-ի մէջ։ Այնտեղ հայերը ներկայանում են նոյն բնազդներով ինչ որ և մահմէտականները։ Վերջիններիս նախայարձակ լինելու մասին ոչ մի խօսք։ Դուրս է գալիս, որ խեղճ հայերը ևս, թիւրքերին կոտորելուց յետոյ՝ խրախճանքներ են սարքել. . „Արբած արիւնով, մթագնած վրէժխնդրութեամբ, կուրացած տգիտութեամբ, յուսահատուած թշուառութիւնից՝ պատռտում էին իրար երկու ժողովուրդները, երկուսն էլ բռնի հեռու պահած կրթութիւնից ու առաջադիմութիւնից, երկուսն էլ անկարող հասկանալու, որ իրենք եղբայրներ են, պրոլետարներ, որոնք միայն մէկ բաղձանք պիտի ունենան՝ միացած ուժերով տապալել կապիտալիզմը և հաստատել սոցիալիզմը“։ —

Այսպէս է գրում այդ թերթի միամիտ թղթակիցը, որին թերևս իր սոցիալ-դէմօկրատական տեսակէտը ստիպում է միևնոյն տախտակի վրայ դնել տարբեր ժողովուրդներին, և անպատճառ հայերին՝ ևս կշտամբել իրենց գլխին պատած սոսկալի աղէտի համար։ Եթէ կան առանձնապէս կծու խօսքեր այդ տարօրինակ թղթակցութեան մէջ, — դարձեալ հայի հասցէին է։ Այսպէս, թղթակցի կարծիքով, հարուստ Ադամեանը „անասնացել էր“, քանի որ իր տունը պաշպանելիս, իբր թէ սպանել է իր ձեռքով 60 թիւրք (°)։

* * *

Եւրոպական թերթերին հեռագրում են.

Մինիստրների կոմիտէի առաջարկութեամբ և կայսերական որոշումով, պաշարման վիճակ է հրատարակուած Քութայիսի նահանգի, ինչպէս նաև Քութայիս, Փոթի և Բաթում քաղաքների համար։

Դիւղացիական շարժումները տարածւում են Լեհաստանում և բուն Ռուսաստանի մէջ, մասնաւորապէս Բեսարաբիայում, ուր խիստ դպալի են վերջին զօրաշարժի հետևանքները։

*

Frankfurter Zeitung-ի, Պարիզի և Վիէննայի թերթերի մէջ հրատարակուեց մեր խմբագրութեան հետևեալ հեռագիրը.

„Իշխան Ամիլախվարի, որ ուղարկուած է Բագու յատուկ միսիայով՝ քննել վերջին կոտորածների պատճառները, բրոնութեամբ խեղդել է ձգտում հասարակական կարծիքը, ապառնում է հայերին նորանոր ճնշումներով, զսպում է աշքերը ամենայայտնի փաստերի առաջ, որոնք անվիճելիօրէն ապացուցանում են ռուս կառավարութեան մեղսակցութիւնը։

„Մենք բողոքում ենք „նովոյէ Վրէմիայի“ և այլ ռուսական պաշտօնական աղբիւրների տարածած անմիտ ու հրեշաւոր ինսինուացիաների դէմ, որոնք երկրորդ Կիշինևի պատասխանատուութիւնը ձգում են հայ յեղափոխական կոմիտէների վրայ։ Կոմիտէները միշտ քարոզել են համերաշխութիւն հարևան ժողովուրդների միջև“։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ԼԵՒՈՆԵԱՆ
(ԵՐԿԱԹ)



Բաղէշի Ծղակ գիւղում ծնուեց նա 1870 թուին։ Դեռ պատանի հասակում՝ ուրիշ շատ հայրենակիցների հետ, նա ևս ձեռք առաւ պանդխտութեան գաւազանը և գնաց

հեռաւոր Ամերիկայ, Հայրենիքում թողած իր դժբախտ ընտանիքին օգնելու նպատակով։ Եւ այնտեղ շուտով յարեց Հ. Յ. Դաշնակցութեան և եղաւ մեր ամենալաւ և գործունեայ ընկերներից մէկը։

Սակայն Անդրատլանդեան երկրի միատեսակ և թէորիական աշխատանքը չկարողացաւ բաւարարութիւն տալ Լեոնեանին։ Նրա յեղափոխական ոգին ծարաւ էր գրական, շօշափելի ու յանդուգն գործունէութեան և ահա 1902 թուին նա թողեց Ամերիկան, իր բազմաթիւ ընկերներն ու բարեկամները և Ժընէվի վրայով անցաւ երկիր, Վան, ուր մի քանի ամիս մնալուց յետոյ, դիմեց դէպի տենչանքի լեռները, դէպի Սասուն։ Մի քանի ժամանակ լեռներում մնալուց յետոյ, նա իջաւ Մուշի դաշտ, և սկսեց պրոպագանդի գործը. — պատելով հայկական գիւղերը նա յորդորում էր ժողովրդին զինուել իր սեփական միջոցներով, և յաճախ իր վրայ էր առնում զէնք գտնելու դժուարութիւնները։ Երեք ամիս դաշտում շրջապտյելուց յետոյ՝ 1903 թուի վերջերը Լեոնեան 12 հոգուց բաղկացած խմբով գնաց Ալաշկերտ, ուր մի կողմից հայ ժողովրդի մէջ զինուելու միտքն էր տարածում գործնականապէս, իսկ միւս կողմից՝ Վանի և Սասունի յարաբերութիւնները շաղկապում։ Ալաշկերտ երկար չմնաց։ Անցաւ Վան, սակայն դեռ նոր էր այնտեղ եկած՝ տեղական կոմիտէների որոշմամբ՝ նա թողեց երկիրը և Պարսկաստանի վրայով անցաւ Եւրոպա՝ Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր ժողովին մասնակցելու համար։

Ժողովից յետոյ՝ Լեոնեանը նոր որոշումներով և յոյսերով գօտեպնդուած, դիմեց դէպի երկիր։ Սասունը արդէն պաշարուած էր և ճանապարհները բռնուած։ Չը նայած բոլոր դժուարութիւններին, 18 հոգուց բաղկացած խմբով նա ուզում էր օգնութեան հասնել կուռող Սասունին։ Յաջողութեամբ հասաւ Արճէշ, բայց այնտեղ կռուի բռնուեց թիւրքը զօրքերի և աշիրէթների հետ։ Կռիւը անհաւասար էր և կատաղի։

. . . Երբ խումբը պատրաստւում է ճանապարհուել — ասում է նկարագրողը — պահապան-զինուորը խմց է տալիս, որ քրդերի մի ահագին գունդ պաշարել է այն քարայրը, որտեղ խումբը մի քանի ժամ առաջ ապաստանել էր՝ ցրտից ու անձրևից պատսպարուելու համար։ Խմբապետը անմիջապէս կարգադրում է կռուի պատրաստուելը։ Սկսւում է հրացանաձգութիւնը, մերոնք ներսից, իսկ թշնամին դրսից։ Ամբողջ օրը այդ ձևով անցկացնելուց յետոյ, երեկոյեան՝ խմբապետի հրամանով՝ երկու հոգի փորձում են դուրս գալ այրից և մի քիչ շփոթութիւն գցել թշնամու մէջ, որը և աջողւում է։ Օգտուելով վայրկենական շփոթութիւնից՝ ամբողջ խումբը կազմ ու պատրաստ դուրս է գալիս այրից և բացօդեայ սկսւում է մի տաք կռիւ։ Բայց նախ քան այրից դուրս գալը, խմբապետը դիմում է հետևեալ միջոցին.—որովհետև զանազան պատճառներով խմբից յետ էին մնացել չորս հոգի, երկու հոգի էլ պաշար բերելու ժամանակ սպանուել և բռնուել էին, պակասած անդամների աւելորդ բեռը և նրանց բաժին պայթուցիկ նիւթերը անհնարին էր հետը վերցնել, ուստի խմբապետը որոշում է այդ բոլոր իրերը այրի մէջ մի տեղ հաւաքել և դուրս գալուց առաջ ռումբերի երկար պատրոյգը վառել։ Քրդերը իսկոյն գրաւում են այրը։ Այդ րոպէին ռումբերի ահռելի պայթիւնը քարուքանդ է անում այրը և տեղնուտեղը գետին փռում 20-ի չափ քրդի դիակներ։ Մնացածները սարսափած այս տարօրինակ երևոյթից, փախուստ են տալիս, միջոց տալով խմբին ապահով պատռել շղթան և անցնել Մի քիչ հեռանալով տղերքը դիրք են գրաւում և սկսում՝ գնդակահար անել փախչող թշնամուն։ Մերոնցից սպանւում և յետ են մնում ընդամենը եօթը հոգի, իսկ թշնամուց սպանւում են մօտաւորապէս 55 քիւրդ, որոնցից մի քանիսը ամենայայտնի ցեղապետներից։

Ընկածների մէջ էր և Աշտա-Երկաթը։

Ի՞նչ եղաւ նրա դիակը, ո՞ւր է նրա գերեզմանը — ոչ ոք գիտէ։ „Անյայտ“ դամբարանի հետ միասին հայ պատմագրութեան էջերին ենք յանձնում նրա սիրելի անունն ու խոստմնալի գործը։

Յարգանք նրա անուան, պատիւ նրա գործին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Դաշնակցութեան տեղական Կեդր. կոմիտէն, փետրուարի 7-ին, ուղարկեց իշխան Նակաշիձէին հետեւեալ սպառնագիրը։

Պ. Նահանգապետ,

Վերջին օրերում տեղի ունեցած արիւնալից դէպքերը, մեզ ներշնչեցին մի կարծիք, որը դառնում է համոզմունք մեզ համար, — այն, որ թափուած ամբողջ արիւնն պատճառը դուք էք և ձեզ ենթարկուած ատիկանութիւնը։ Հարկաւոր չդատելով ապացոյցներ բերել ձեր յանձնառած վարմունքի համար, որը բազմաթիւ անմեղների կորստեան պատճառ եղաւ, Հայ Յեղ. Դաշնակցութեան Կենտրոնական կոմիտէն, նախ քան իր վայ գրած արքունական պարտականութեան կատարման ձեռնարկելը՝ պաշտպան հանդիսանալ անմեղ զոհերին, աւելորդ չի համարում յայտարարել ձեզ, պ. Նահանգապետ, որ եթէ արիւնհեղութիւնը չէք դադարեցնի ձեր ձեռքում եղած բոլոր միջոցներով, այդ դէպքում դուք պատասխանատու էք ձեր արիւնով, այլև ձեր մեղսակիցների արիւնով։

Հ. Յ. Դ.

ԲԱԳԻՒ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

Նիւթերու առատութեան պատճառով առաջիկայ հատորին յետաձգեցինք նուիրատուութեան ցանկերուն հրատարակութիւնը։

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Լ. ՈՅՍ ՏԵՍԱԻ

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԴԻՊԻ ԿՈՒԻ

Բաղկացած 275 երեսից, նուիրուած եկեղեցական կալուածների յափշտակութեան և կովկասահայերի վերջին շարժումներին։

Գինը Եւրոպայում՝ 2 ֆրանկ, Ամերիկա՝ կէս դոլար Կովկաս՝ 1 ռուբլի։

Դիմել »Դրօշակ«ի խմբագրութեան

Մեր խմբագրութեան հասցէն՝

Rédaction du „DROSCHAK“, Genève (Suisse